23 ՕԳՈՍՏՈՍ 2001 ՀԻՆԳՇԱԲԹԻ 149 (2353)

Azg
armenian daily

Վանաձորում հայտնաբերվել է մեծ քանակությամբ զինամթերք

Ինչպես տեղեկացանք Լոռու մարզի արտակարգ իրավիճակների եւ քաղաքացիական պաշտպանության վարչությունից՝ օգոստոսի 21-ին, ժամը 13:00-ին անհայտ քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ Վանաձորի մեծաղաքաղաքայի եւ նախկին բանակային բնակտահագործման բաժնի պահեստների միջանկյալ տարածքում՝ երկաթգծի մոտակայքում, գտնվել են տարբեր տրամաչափի արկեր:

Վարչության պետ, գնդապետ Պողոսյանն անմիջապես մեկնել է դեպքի վայր եւ ստուգելով ահազանգի ճշտությունը՝ զեկուցել Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանին: Այս մասին տեղեկացվել է մարզային ՆԳ բաժին, ազգային անվտանգության վարչություն եւ երրորդ բանակային կորպուս, ապա օպերատիվ խումբը մեկնել է դեպքի վայր: Տեղանքը հետազոտելու արդյունքում՝ բացի վերգետնյա արկերից հայտնաբերվել է նաեւ թաղված տարբեր տեսակի զինամթերք. Т 30 տեսակի 4 արկ 122 մմ տրամաչափով, ՊТ 12 տեսակի 3 արկ 100 մմ տրամաչափով, D 44 տեսակի 1 արկ 85 մմ տրամաչափով, Т 72 տեսակի 2 արկի ջարդոն 125 մմ տրամաչափով եւ 1 ուղղաթիռի հրթիռ:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցողիկ բալերի որոշակի անկում բուհ ընդունվողների շրջանում

Դիմորդների թիվն այս տարի աճել է 3 հազարով

ԱՆՈՒՇ ԲԱԲԱՅԱՆ

Ընդունելության քննությունների ավարտի կապակցությամբ երեկ ասուլիս էր հրավիրել կրթության եւ գիտության նախարար Էդուարդ Ղազարյանը: Քննական եւ մրցութային արդյունքներն ամփոփելով՝ նա արձանագրեց այս եւ նախորդ տարի օրինաչափ դարձած մի քանի իրողություններ:



Նախ տեղեկացնենք, որ այս տարի էլ, վերջին տարիների օրինակով, իրենց այսպես կոչված բարձր վարկանիշը պահպանել են պետհամալսարանի տնտեսագիտության, իրավաբանության, ռոմանա-գերմանական եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետները. այսինքն՝ վերոհիշյալ մասնագիտությունների «պահանջարկը» դիմորդների շրջանում առաջվա պես մեծ է: Նախարարը տեղեկացրեց նաեւ, որ նախորդ տարվա համեմատ դիմորդների թիվն այս տարի ավելացել է 3 հազարով: Դիմորդների ընդհանուր թվի աճին զուգահեռ՝ «անբավարար» ստացած դիմորդների թիվը, սակայն, անցյալ տարվա համեմատ առանձնապես չի փոփոխվել՝ շուրջ 3 հազար 500 (12,5 տոկոսը): Փոխարենը զգալիորեն նվազել է ամենաբարձր՝ 19 եւ 20 միավոր ստացած դիմորդների թիվը, որ այս տարի կազմել է ընդամենը 15-16 տոկոս, մինչդեռ անցյալ տարի շուրջ 21,5 տոկոս էր: 19 եւ 20 միավորների շուրջ ստեղծված պատկերը, բնականաբար, նպաստել է, որ պետպատվերի մրցութային բալն իջնի, իսկ «նպաստող» առարկաների թվում մաթեմատիկան է, անգլերենը եւ հայ ժողովրդի պատմությունը:

Ընդունելության քննությունների արդյունքներն ըստ առարկաների ներկայացնելով՝ նախարարն արձանագրեց, որ դիմորդներն այս տարի էլ, անցած տարվա պես, ամենացածր առաջադիմություն են ցուցաբերել քիմիա, ֆիզիկա եւ ռուսաց լեզու-գրավոր առարկաներից:

Տես էջ 3

ԱՅԺ

Հայ-թուրքական երկխոսությունը «շատ նուրբ եւ զգայուն խնդիր է»

Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդունեց ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆին

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունել է ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆի գլխավորած պատվիրակությանը:

Ինչպես հայտնեցին նախագահի մամլո գրասենյակից, Ռոբերտ Քոչարյանը բարձր է գնահատել կոնգրեսականի գործունեությունը եւ համագործակցությունն ու ջերմ հարաբերությունները հայ համայնքի հետ: Ամերիկյան օրենսդիր մարմնի ներկայացուցչի խնդրանքով հանրապետության նախագահը ներկայացրել է ղարաբաղյան խնդրի կարգավորման ներկա ընթացքը, ինչպես նաեւ իր տեսակետը հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի վերաբերյալ:

Զրուցակիցները խոսել են նաեւ հայ-ամերիկյան հարաբերությունների մասին: Նախագահն ասել է, որ դրանք այսօր թեւակոխում են որակական նոր փուլ. մարդասիրական օգնության ծրագրերն իրենց տեղը զիջում են բոլորովին այլ տիպի համագործակցության: Իրականացվում են զարգացման ծրագրեր, որոնք հիմնականում ուղղված են բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ձեւավորմանը եւ ենթակառուցվածքների կայացմանը: Ակտիվորեն աշխատում է հայ-ամերիկյան աշխատանքային խումբը, որի հաջորդ նիստը տեղի կունենա հոկտեմբերին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Պաշտպանելով երկխոսության գաղափարը, Ռոբերտ Քոչարյանը միեւնույն ժամանակ ասել է. «Հաշվի առնելով, որ սա շատ նուրբ եւ զգայուն խնդիր է, ցանկալի է, որ հայ-թուրքական հարաբերություններին առնչվող հարցերը քննարկվեն կամ պետական մակարդակով, որից Հայաստանը երբեւէ չի խուսափել, կամ քաղաքական ուժերի հնարավորինս լայն ընդգրկմամբ եւ համաձայնեցված քայլերով»:

Նշելով, որ երկկողմ հարաբերությունների օրակարգում առանձնահատուկ տեղ է գրավում բարձր տեխնոլոգիաների ոլորտում համագործակցությունը, Ռոբերտ Քոչարյանը վստահություն է հայտնել, որ Հայաստանն իր ամուր դիրքը կգրավի տարածաշրջանի ինտելեկտուալ ծառայությունների կենտրոնում: «Հայաստանը լինելու է այս տարածաշրջանում ամենակազմակերպված եւ կայուն երկիրը՝ ամենաազատ տնտեսական հարաբերություններով», շեշտել է երկրի ղեկավարը:

ԱՄՆ-ի ներկայացուցիչը լավատես է ղարաբաղյան բանակցությունների առթիվ

ԵՐԵՎԱՆ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: ԱՄՆ-ի պետդեպարտամենտի բարձրաստիճան մի ներկայացուցիչ դրական է գնահատել ղարաբաղյան բանակցությունների ընթացքը՝ չհամաձայնելով այն կարծիքի հետ, թե այդ բանակցությունները ձախողվել են:

ԱՄՆ-ի պետդեպարտամենտի եվրոպական հարցերով քարտուղարի օգնական էլիզաբեթ Ջոնսը Վաշինգտոնում լրագրողներին ասել է, որ ինքը լավատես է Ղարաբաղյան բանակցությունների հաջող ընթացքի շուրջ: Նա միաժամանակ հրաժարվել է կանխատեսել, արդյոք այս տարի հնարավո՞ր է հասնել խնդրի վերջնական կարգավորման:

Էլիզաբեթ Ջոնսը, որը եկող շաբաթ այցելելու է Հարավային Կովկասի երկրներ, չի համաձայնել, թե այս տարվա ընթացքում տեղի ունեցած հանդիպումները անարդյունք են անցել: «Զգալի առաջընթաց կար մինչեւ Քի Վեսթի հանդիպումը, իսկայական առաջընթաց տեղի ունեցավ Քի Վեսթում: Այստեղ ձեռք բերված առաջընթացի հիման վրա շարունակվում են բանակցությունները ու քննարկումները: Վերջնական համաձայնություն չի կայացվել, դա ցավալի է, բայց սա դեռ ճանապարհի վերջը չէ: Դեռեւս հսկայածավալ աշխատանք է ընթանում: Երկու ղեկավարները հանդիպեցին Սոչիում, կրկին հանդիպելու են: Սա ամենեւին չի կարող կոչվել բանակցությունների ձախողում կամ արգելակում», ասել է նա:

Ջոնսը հայտնել է, որ Հարավային Կովկաս այցելելուց առաջ նա Վիեննայում հանդիպելու է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու համար ղարաբաղյան բանակցությունների ընթացքը: Նա բարձր է գնահատել Մինսկի խմբի անդամների համատեղ ջանքերը այս բանակցությունների դյուրացման ուղղությամբ, մասնավորապես երեք երկրների նախագահների ջանքերը:

Թեհրանը Բաքվից բացատրություն է պահանջում

Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին «Իրան նյուս» անգլիատառ օրաթերթին չորեքշաբթի տված հարցազրույցում, անդրադառնալով թուրքական բանակի Fantom-5 տեսակի 10 կործանիչների Բաքու ժամանելու փաստին, ասել է. «Իրանն արտահայտել է իր դժգոհությունը եւ բացատրություն պահանջել»: Արտգործնախարարը նշել է, որ Բաքվի հավաստիացումները, թե Ադրբեջանում թուրքական ինքնաթիռների ցուցադրական ելույթները Իրանի հանդեպ ուղղված քայլ չեն, չեն բավարարում Իրանին. «Մենք զարգացումներին կհետեւենք մոտիկից եւ ամենաբարձր զգայնությամբ»: Պատասխանելով այն հարցին, թե նախագահ Հ. Ալիեւը վստահության արժանի՞ հարեւան է, Խարազին ասել է. «Ալիեւը հարեւան երկրի նախագահն է, եւ մենք միշտ փորձում ենք ընդլայնել մեր բարեկամական կապերը Բաքվի հետ»:

Բախումներ Ադրբեջանի մայրաքաղաքում

ԲԱՔՈՒ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Օգոստոսի 22-ին Բաքվում ընդհարումներ են տեղի ունեցել ոստիկանության եւ Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի կողմնակիցների միջեւ, որոնք նշում էին նրա մահվան տարելիցը: Ինչպես հաղորդում է «Ինտերֆաքսը», նախկին նախագահի հազարավոր կողմնակիցներ հավաքվել են Բաքվի նրա տան մոտ, որտեղից սկսվել է չարտոնված երթ դեպի Էլչիբեյի գերեզման: Բախումներն սկսվել են արդեն նախկին նախագահի տան մոտ, երբ մի քանի հարյուր ոստիկաններ փակել են շարասյան առաջընթացը: Ոստիկանությունը ձերբակալել է ընդդիմության մոտ 20 ակտիվիստների: Էլչիբեյը մահացավ 2000 թվականի օգոստոսի 22-ին Թուրքիայում, 62 տարեկան հասակում, որտեղ նա բուժվում էր ծանր հիվանդությունից: Նա Ադրբեջանի նախագահ ընտրվեց 1992 թվականի հունիսի 7-ի ընտրություններում: Պաշտոնանկվեց 1993 թվականի հունիսի 17-ին՝ գնդապետ Սուրեթ Հուսեյնովի ռազմական խռովության արդյունքում:

Հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը չի ոգեւորում Համաշխարհային բանկին

Հայաստանի արտաքին պարտքը վերջինիս 391 մլն դոլար է, մեր երկրի արտաքին ընդհանուր պարտքի գրեթե կեսը

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ռուսական գործարար շրջանակներում ազդեցիկ «Կոմերսանտ» օրաթերթը օգոստոսի 18-ի եւ 20-ի համարներում հրապարակել է երկու հոդված, որոնք վերաբերում են հայ-ռուսական ներկա հարաբերություններին, Հայաստանի ԲԷՏ-երի սեփականաշնորհման մրցույթին «Իտեռա» ընկերության մասնակցությանը, Համաշխարհային բանկի (ՀԲ) եւ Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) ակնհայտ դժգոհությանը սեփականաշնորհման մրցույթում «Իտեռայի» հավանական հաղթանակից:

1999 թ. դեկտեմբերին ԲԷՏ-երի մասնավորեցման մրցույթի հավակնորդներին՝ 8 երկրների 14 ընկերությունների ուղարկվեց մրցութային փաստաթղթերի նախնական տարբերակը, առաջարկությունների փաթեթը պետք է բացվեր 2000 թ. ապրիլին, մայիսին նախատեսվում էր պայմանագրի կնքում: Ռազմավարական ներդնողը կարող էր ձեռք բերել ԲԷՏ-երի բաժնետոմսերի 51 տոկոսը, մինչեւ 20 տոկոսը գնելու էր ՎԶԵԲ-ը, 24 տոկոսը մնալու էր ՀՀ կառավարության հայեցողության տակ, 5 տոկոսը նախատեսվում էր հանձնել շրջանային ԲԷՏ-երի աշխատակազմին: Որակավորման մրցույթին մասնակցեցին 5 ընկերություններ՝ իսպանական «Union Fenoza»-ն, ամերիկյան «AES Silk Road»-ը, ֆրանսիական «EDF»-ն, շվեյցարա-շվեդական «ABB»-ն եւ «ITERA» միջազգային էներգետիկ կորպորացիան: Որակավորման փուլը չհաղթահարեց միայն վերջինս, որը հայտ էր ներկայացրել «Ռոս էներգոսոմի» հետ, պատճառաբանությամբ, թե վերջինս չէր հասցրել ժամանակին անցնել միջազգային աուդիտ: Ուշադրություն դարձնենք մեկ կարեւոր փաստի. որակավորման փուլը կայացավ ապրիլի 10-ին, մինչդեռ այն ժամանակ ՀՀ էներգետիկայի նախարար Դ. Զաքոյանը մինչ ապրիլի 10-ն ակնկալել էր, որ «Իտեռան» որակավորման փուլը չի հաղթահարի: Ակնհայտորեն ՀՀ իշխանությունները ՀԲ-ի, ՎԶԵԲ-ի եւ ամերիկյան կառավարության ճնշումներին տուրք տալով՝ անցանկալի էին համարում ԲԷՏ-երի սեփականաշնորհման մրցույթում «Իտեռայի» հնարավոր հաղթանակը:

Տես էջ 3

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակում սեպտեմբերի 23-ը թերեւս կլինի ամենանշանավոր օրը, քանի որ այդ օրը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր դռները կբացի աշխարհասփյուռ հայության ներկայացուցիչների, օտարերկրյա պատասխանատու հյուրերի, բարձրաստիճան եկեղեցականների եւ առհասարակ ժողովրդի առջեւ:

3500 մ²-ի վրա տարածված, 63 մետր բարձրություն եւ 1700 նստատեղ ունեցող այս վեհ կառույցը կդառնա մեր եկեղեցաշինության պատմության մեջ իր ծավալներով ամենամեծը:

Այս օրերին, երբ եկեղեցու բացմանը հաված օրեր են մնացել, շինարարական եռուզեռն ավելի մեծ է: Մոտ 600 շինարար է աշխատում այստեղ: Բարդ եւ թանկարժեք այս նախագծի համար պատասխանատվություն կրող «Երեւանշին» ԲԲԸ-ն նպատակ ունի բացման օրն ավարտուն տեսքի հասցնել եկեղեցին: Ինչպես մեզ տեղեկացրեց ընկերության տնօրեն Վազգեն Պողոսյանը, շինարարական աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, շինարարները նույնիսկ մի քանի օր առաջ են ընկել սահմանված ժամանակացույցից:

Մինչեւ սեպտեմբերի 23-ը չեն ավարտվի միայն նկուղային հարկի աշխատանքները, սակայն դա չի խանգարի բացման արարողությանը:

Մեր հարցին, թե դժվար չէ՞ր արդյոք այդպիսի հսկայական կառույցն ավարտել այդ կարճ ժամանակահատվածում, պրն Պողոսյանը պատասխանեց, որ եկեղեցու կառուցման համար ուժերը ներդրել են իրենց գործի վարպետները: Նա նշեց հատկապես եկեղեցու ճարտարապետ Ստեփան Քյուրֆչյանի անունը, առանց որի անմիջական մասնակցության այստեղ քար չի դրվել, ճարտարապետ Յուրի Դալլաքյանի եւ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ Էդվարդ Բալասանյանի անունները: Այս ամենին նա գումարեց շինարարների համառությունը եւ հմտությունը:

- Երբեմն ասում են, որ շինարարներն աշխատում են եւ դրա դիմաց վարձատրվում, եւ դա բնական է, նշեց Վազգեն Պողոսյանը, բայց համոզված եմ, որ նրանք պատրաստ են նույնիսկ անվճար աշխատել, միայն թե գործն իր լրումին հասցնեն: Մարդը հրճիք է թափել հայ ազգային նշանակության մի կառույցի համար եւ այդ պատճառով բնական հպարտություն է զգում:

Ի դեպ, ամեն կիրակի այստեղ են գալիս նաեւ «Երիտասարդ ուխտագնացների միության» անդամները: Պատանիներն ու աղջիկները օգնում են շինարարական եւ մարման աշխատանքներին եւ ասում են, որ մի օր դրա մասին հպարտությամբ պատմելու են իրենց երեխաներին:

Մոտ մեկուկես տարի առաջ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ օծվեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի խաչերը: Այդ օրվանից կիսակառույց շինությունը սրբավայր է դարձել: Եկեղեցում արդեն մեկ պսակադրություն է տեղի ունեցել, բայց բազմաթիվ նորապսակներ այլ եկեղեցում ծիսական արարողության ավարտից հետո գալիս են Սուրբ Գրիգոր Լուսավորիչ՝ հույս ունենալով, որ մուտքն այս եկեղեցի իրենց երջանկություն կբերի:

Եկեղեցում էր նաեւ Ֆրանսիայից ժամանած մի հայկական ընտանիք: Որդին՝ Գրիգորը, տեսողության խնդիրներ ուներ: Ծնողները ցանկանում էին, որ Գրիգորն իր ձեռքով մեկ քար դնի Սուրբ Գրիգոր Լուսավորչի կառուցման համար, եւ հույս ունեին, որ այդ խորհուրդը կառողջացնի իրենց որդուն: Գրիգորը դրեց իր քարը:

Եկեղեցու բացման օրը բազմաթիվ սփյուռքահայեր, արցախցիներ եւ տեղաբնակ հայեր կգան եւ իրենց ներկայությամբ կհաստատեն անխզելի կապն իրենց նախնիների հավատքի հետ:

Տա Աստված, որ մի օր իսկապես 9 մլն մոմ վառվի Երեւանի Մայր տաճարում:

ՄԱՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Սեպտեմբերի 23-ին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր դռները կբացի այցելուների առջեւ



ՊԱՏԿԵՐԱՅԻՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԿՎԱՏԹԱՐԱՆԱ

Տարածքների վարձավճարների խնդրում որդեգրվել է միասնական մոտեցում

ԵՐԵՎԱՆ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ կառավարությունը որոշում էր ընդունել պետական գերատեսչությունների ենթակայությունից որոշ շենքեր պետական գույքի կառավարման նախարարությանը փոխանցելու մասին (այդ թվում՝ ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության, մշակույթի, ԿԳ նախարարությունների ենթակայության տակ գտնվող շենքերը):

Ըստ ՀՀ պետական գույքի կառավարման նախարար Դավիթ Վարդանյանի, պետական անշարժ գույքը պետք է կառավարվի մեկ նախարարության կողմից (վարձակալության տրվի, օտարվի), եւ վերոնշյալ որոշումը դրան ուղղված քայլերից մեկն է:

ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության պետ Էդվարդ Միլիտոնյանը նույնպես գտնում է, որ ճիշտ որոշում է կայացվել, եւ պետությունը պետք է լինի այդ ամենի պահապանն ու հովանավորը, սակայն, ըստ նրա, գերատեսչությունների ներսում կան առարկայացած իրավիճակներ, որոնց խախտումը կարող է բացասաբար անդրադառնալ տարբեր ոլորտների վրա: Էդ. Միլիտոնյանը նշեց, որ, օրինակ, խմբագրություններին տարածքը զեղչերով է վարձակալության տրվում՝ հաշվի առնելով մամուլի նկատմամբ պետական հովանավորությունը: Բարձր չեն նաեւ տպատարկման գները: Եթե վարձավճարները բարձրանան, խմբագրությունները մեծ դժվարությունների կհանդիպեն: Այս պարագայում, թերեւս, ճիշտ կլինի որոշ ոլորտների համար տարբերակված մոտեցում ցուցաբերել:

Դ. Վարդանյանը, սակայն գտնում է, որ հնարավոր չէ տարբերակված մոտեցում ցուցաբերել, այդ մասին վերոնշյալ որոշման մեջ խոսք չկա: Ըստ նախարարի, կնքված պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո կկնքվեն նոր պայմանագրեր՝ ՊԳԿ նախարարության սահմանած վարձավճարներով:

Նշենք, որ ներկայումս մեկ քառակուսի մետրի համար, խմբագրությունները վճարում են ամսեկան մոտ 300 դրամ, իսկ ՊԳԿ-ի վարձավճարներով՝ մեկ քառակուսի մետրի համար պետք է վճարվի մոտ 750 դրամ:

Ըստ էդ. Միլիտոնյանի, վարձավճարների, ինչպես նաեւ տպատարկման վճարների հետ կապված խնդիրները գերատեսչություններում արդեն իսկ թե ինչ կանոնակարգվել էին, եւ փորձ էր արվում տեսել, չխանգարել ոչ խմբագրությունների աշխատանքը, ոչ էլ տպատարկմանը:

ՊԳԿ նախարարը այլ ելք առաջարկեց. օրինակ՝ Մամուլի տան (Արշակունյաց 2) վարձակալները կարող են համաձայնություն ստեղծել եւ ամբողջ շենքը համաձայնության ձեւով գնել. «Եթե մասնավորեցնողները մամուլի, կամ մշակութային կազմակերպություններ լինեն, կարող ենք ընդառաջել, քանի որ այս դեպքում սահմանափակումներ չկան. արդեն հնարավոր է տարբերություն դնել՝ առեւտրային ընկերություն է, թե մշակութային», պարզաբանեց նա:

Նախարարը նշեց, որ արդեն մամուլի տան շենքի վարձակալներին ասվել է, որ առաջարկված տարբերակի շուրջ բանակցություններ վարեն: Նույնպիսի տարբերակ է առաջարկվել նաեւ որոշ նախագծային ինստիտուտների:

«HSBC-Հայաստան» բանկի շուրջ աղմուկը «լրագրողական տրյուկ» էր

Օրերս մամուլում «HSBC-Հայաստան» բանկի շուրջ ստեղծված աղմուկը՝ մանր ավանդատուների (որոնք ունեն 250 դոլարից պակաս ավանդներ) նկատմամբ բանկի ոտնձգությունների վերաբերյալ, HSBC-ի գործադիր տնօրենի տեղակալ Ա. Ղուկասյանը համարում է սարքովի: Ըստ պրն Ղուկասյանի, որոշ թերթեր արդեն սովորություն են դարձրել այս կամ այն կառույցի մասին աղաստեղեկատվություն տարածելով՝ ստանալ պատվերով նյութեր գրելու եւ փող աշխատելու հնարավորություն: Վերջին աղմուկը եւս նման մի «լրագրողական տրյուկի» արդյունք է: Նա պարզաբանեց, որ բանկը չունի առանց ավանդատուին ծանուցելու ամսական 5000 դրամ տուգանելու պրակտիկա, ինչպես նշվել է մամուլում: Իրականում խոսքը վերաբերում է եռամսյակային գանձումներին, որի ժամանակ հաճախորդը՝ պարտադիր ծանուցվում է:

Պրն Ղուկասյանը ճշտեց նաեւ, որ HSBC-ի կանոնադիր կապիտալը եղել է ոչ թե 3 մլն դոլար (ինչպես օրերս նշել էր մեր թերթը՝ հիմնվելով ՀՀ ԿԲ-ից ստացված տեղեկատվության վրա), այլ իրականում 1995 թ.-ին հիմնված «Միդլենդ-Արմենիան» հայտարարել էր 6 մլն դոլար կանոնադիր կապիտալի մասին, սակայն փաստացի ներգրավված կապիտալը կազմել է 5 մլն դոլար (մոտ 2 մլրդ 43 մլն դրամ):

Գ. Ա.

Հայաստան ներկրված սննդամթերքի զգալի մասը ժամկետանց է եւ անորակ

ԵՐԵՎԱՆ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայկական շուկա ներկրված կաթնամթերքն ու մսամթերքը հիմնականում անորակ ու ժամկետանց են եւ որպես սննդամթերք օգտագործելու համար ոչ պիտանի: Այսպիսին է ՀՀ Գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի գյուղատնտեսական ակադեմիայի մսի եւ կաթի տեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կաթի եւ կանթնամթերքի անկախ լաբորատորիայի տնօրեն Ռազմիկ Բեգլարյանի տեսակետը:

Հնդկաստանից եւ Միացյալ Արաբական էմիրություններից Հայաստան է ներկրվում մեծ քանակով միս, որը հիմնականում օգտագործվում է երշիկեղենի արտադրության մեջ: Սակայն այդ երկրներից ներկրվածը հիմնականում սննդարդյունաբերության մեջ օգտագործման համար պիտանի չէ: Հնդկաստանում, օրինակ, խոշոր եղջերավոր անասունները պատամունքի առարկա են, եւ մորթի են ենթարկվում միմիայն հիվանդ ու սատկած վիճակում եւ վաճառվում են շատ էժան, ինչն էլ գրավիչ է գործարարների համար:

Կասկածելի է Հայաստանում մեծ քանակով վաճառվող ամերիկյան արտադրության կաթի փոշին, որի 1 կգ վաճառքի գինը 1-3 դոլար է, մինչդեռ ԱՄՆ-ում՝ 7-10 դոլար, քանի որ 1 կգ կաթի փոշին ստացվում է նվազագույնը 8 լիտր կաթից, որի 1 լիտրի արժեքը 0,90-0,95 ցենտ է:

Ըստ Ռազմիկ Բեգլարյանի, վստահություն չի ներշնչում նաեւ Հայաստանում վաճառվող կարագը, որ հիմնականում արտադրվում է Ավստրալիայում, Նոր Զելանդիայում եւ Ֆինլանդիայում: Այդ երկրներում կաթի գինը գրեթե նույնն է, ինչ ԱՄՆ-ում: 1 կգ կարագ ստացվում է 22-23 կգ կաթից: «15-20 դոլար ինքնարժեք ունեցող արդանքը ոչ մի տրամաբանությամբ 2-3 դոլարով չի վաճառվի», պնդում է Ռազմիկ Բեգլարյանը: Միջազգային չափանիշներով կարագը ունենում է 82,5% յուղայնություն, 15% խոնավություն: «Գյուղացիական» կարագի յուղայնությունը լինում է 72,5%: Իսկ այն, ինչ վաճառվում է Հայաստանում, ունի 42%, երբեմն 48% յուղայնություն, եւ կարագ չէ:

Ինչ վերաբերում է այսպես կոչված «Ավստրալիայի կամ Նոր Զելանդիայի արտադրության» կարագին, արդա դա, ըստ Ռ. Բեգլարյանի, ծովային կենդանիների ճարպ է, որին դեղին գույն տալու համար ավելացվում են պիգմենտներ եւ չնչին քանակությամբ արոմատիկ նյութեր: Չի բացառվում, որ դրանց արտադրությունը կատարվում է հենց Հայաստանում, այսինքն բերվում է ճարպը եւ այստեղ մշակվում: Այս եւ նմանատիպ շատ հարցերով Գյուղատնտեսական ակադեմիայի մսի եւ կաթի տեխնոլոգիայի ամբիոնը բազմիցս դիմել է հանրապետության ղեկավարությանը, բայց պատասխանը եղել է մեկը. «Շուկա-

ՀՀ արտգործնախարարը այսօր պատմական այցով մեկնում է Բելգրադ

ԵՐԵՎԱՆ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Օգոստոսի 23-ին ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը եռօրյա պատմական այցով կմեկնի Հարավսլավիայի Դաշնային Հանրապետություն: Ակնկալվում է, որ այցը երկու երկրների միջեւ հարաբերությունների զարգացման առումով էական առաջընթաց կդառնա:

Արտաքին գործերի նախարարության հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից հայտնեցին, որ այցի ընթացքում նախատեսվում է քննարկել ինչպես երկու երկրների միջեւ քաղաքական երկխոսության ծավալման, այնպես էլ՝ դրան զուգահեռ տնտեսական համագործակցության զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները: Այս առումով խիստ կարեւորվում են նախկին կապերի վերականգնումը եւ ընդլայնումը:

Կենտրոնական բանկը հումորով է ընդունում Արա Սահակյանի պնդումները

Նախկին Աժ փոխխոսնակ, հանրահայտ Արա Սահակյանն օրերս հանդես եկավ հրապարակումով, որտեղ «ցնցող» նորություն հայտնեց, թե իբր Կենտրոնական բանկը կառուցում է պահուստային բանկ, որն «ըստ ԿԲ ղեկավարության մտահղացման, պետք է ծառայի որպես ժամանցի փակ հաստատություն»: Ինչպե՞ս են վերաբերվում պրն Սահակյանի այդ հոդվածին ՀՀ ԿԲ-ում: **«Ազգը»** դիմեց ԿԲ տեղեկատվական կենտրոն, որտեղից հարցը մեկնաբանեցին հետեւյալ կերպ.

- Հումորով: Նախկին Աժ նախկին փոխխոսնակն առանց որոշակի աշխատանքի (պարապ) մնալով, հավանաբար որոշել է դեղին լրագրությամբ զբաղվել, ինչպես նաեւ վերադառնալ իր վաղեմի նախասիրությանը՝ «տիրոն-տիրոն» խաղալ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
հանդակարգային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրյագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՈՒՄԲԱԳԻԿ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Նրանք գլխատեցին իրենց՝ հանուն...

ԱԺՄ-ն միայն մի ճանապարհ գիտի. խայխայում

Երբ դաշտում վար անելիս գութանի խոփը քարին հարվածելուց հանկարծ կոտրվեց, խեղճ գյուղացին զայրացած եւ հուսահատված բացականչեց. «Սատանան տանի, հիմա ի՞նչ անեմ»: Մոտերով իր մոր հետ զբոսնող սատանայի ծագը հարցնում է. «Մայրիկ, մենք այնտեղ ոչինչ չարեցինք, հիմա էլ ինչո՞ւ են մեզ հայհոյում»: «Որդիս, պատասխանում է սատանան, մենք հեռու ենք, բայց մեր մասն է այնտեղ խառը»:

Դավիթ Վարդանյանն այս հին առակը երեւի լավ գիտեր:

ԱԺՄ-ի քարը դրվեց հենց այն պահին, երբ Վարդանյանը նշանակվեց պետական գույքի կառավարման նախարար: ԱԺՄ-ական այս գործիչը պաշտոնը ստանալուց հետո իշխանությունների հանդեպ այնպես փափկեց, որ երկար ժամանակ նրա ձայնը գրեթե չէր լսվում:

Սկզբնական շրջանում ԱԺՄ-ին թվաց, թե ահա հասնում են այն նպատակին, որի համար մինչ այդ ստիպված էր իսկական մենամարտի բռնվել գործող իշխանության հետ. գործադիր ոլորտում լծակներ ձեռք բերելով ստիպանաբար իշխանության հասնել կամ առնվազն նրա մի մասնիկը դառնալ: Հենց դա էր պատճառը, որ արդեն նախկին ԱԺՄ-ականներ Շավարշ Քոչարյանը եւ Արշակ Սադոյանը զարմանալիորեն հանդուրժող գտնվեցին Դավիթ Վարդանյանի՝ նախարարական պորտֆել վստակելու փաստի հանդեպ:

Սակայն հետագան պարզեց, որ ԱԺՄ-ն հաշվարկներում խիստ սխալվել էր: Պետական գույքի կառավարման նախարարի պաշտոնը հենց այն գայթակղության քարն էր, որին չդիմացավ ԱԺՄ-ն: Դավիթ Վարդանյանը չէր կարող իր բոլոր կուսակիցներին աշխատանքի տեղավորել: ԱԺՄ-ում հուսահատվածների մի մասը հասկացավ իշխանության լավ խաղացած տյուկը եւ անմիջապես սկսեց վերադառնալ այսպես կոչված կառուցողական ընդդիմության շարքերը, իսկ մյուս, առավել սվար հատվածը, որ արդեն հասցրել էր Վարդանյանի շնորհիվ արմատներ ձգել նախարարության տարբեր վարչություններում, փաստորեն կորցրեց հեղաշրջման ճանապարհը՝ ընկնելով Վարդանյանի եւ պետական նոմենկլատուրայի ազդեցության տակ: Նախարար Վարդանյանը զգաց իր առավելությունը կուսակցության ներսում եւ ակտիվորեն չմասնակցելով անգամ ԱԺՄ-ում տարվող աշխատանքներին, ներքին կարգով ըստ էության ինքն էր որոշումներ ընդունում: Արդյունքում Վազգեն Մանուկյանը հայտնվեց խաղից դուրս իրավիճակում, ստիպանաբար կորցնելով դիրքերը կուսակցության վարչությունում: ԱԺՄ-ում սկսեց արմատավորվել թելադրված մի կարծիք, թե որեւէ բանի հասնելու կամ որեւէ փոփոխություն կատարելու համար հարկավոր է լինել իշխանության հետ: Ուշադրություն դարձնենք՝ լինել ոչ թե հենց իշխանություն, այլ նրա հետ, նույնն է՝ կցորդը:

Եվ պատերազմը սկսվեց... Առաջ եկան ԱԺՄ երկու արբանյակներ ԱԺԴ-ն եւ ԱԺԿ-ն, որոնք չնչին գաղափարական տարբերություններ ունեին միայն եւ, այնուամենայնիվ, սկսեցին առանձին գործել:



Պառակտման այդ փուլում էր հենց, որ Վազգեն Մանուկյանը փորձեց օգտագործել իրադրությունը եւ վերադարձնել իր խաթարված հեղինակությունը: Նա հայտարարեց, թե ինքը ստանձնել է հաշտարարի դերը եւ փորձելու է ԱԺՄ-ն նախկին տեսքի բերել: Մանուկյանը, սակայն, շատ ուշ էր զարթնել: Բավականին մեծ քաղաքական փորձառություն ունեցող այդ գործիչը ժամանակին չկարողացավ կանխել վերահաս վտանգը, ինչի հնարավորությունն ուներ, որի համար էլ մեղադրվեց իր քիչ թե շատ համախոհների կողմից. Արշակ Սադոյանը նրա որոշումն ուշացած համարեց՝ գտնելով, որ բանից անցել է, իսկ Շավարշ Քոչարյանն այժմ էլ պարզ հայտարարում է, որ եթե ժամանակին Մանուկյանն իրենց կողքին լիներ, ԱԺՄ-ն նման փաստի առաջ չէր կանգնի:

Սակայն նույնիսկ հաշտարարի առաքելություն ստանձնելուց հետո էլ Մանուկյանը հետեւողական չեղավ դրա իրագործմանը՝ շարունակելով մնալ միջանկյալ վիճակում, որը հավասարապես չէր կարող ընդունելի լինել ԱԺՄ ոչ իշխանամետների եւ ոչ էլ ընդդիմադիրների կողմից: Առաջինները, ի դեմս Մանուկյանի, լուրջ խոչընդոտ են տեսնում կուսակցությունը վերջնականապես իշխանությանը կցելու ճանապարհին, երկրորդները նյարդայնանում են՝ գտնելով, որ եթե Մանուկյանն իրենց կողքին չէ, ուրեմն կողմնակից է իշխանամետների որդեգրած քաղաքականությանը: Եվ քանի որ նրանք կորցնելու այլեւս ոչինչ չունեին, միայն որպես ականատես էին հանդես գալիս այդ շրջանում արդեն սկսված ԱԺՄ-Մանուկյան հակամարտության մեջ:

Արդյունքում ԱԺՄ խորհրդարանական խմբակցությունը Վազգեն Մանուկյանից հետ վերցրեց խմբակցության ղեկավարի լիազորությունները: Դա ամենալուրջ հարվածն էր Մանուկյանին, որով նախաձեռնողները հասկացրին, որ ԱԺՄ ղեկավարն այլեւս չի ընդունվում իրենց կողմից: Փաստորեն, լինելով կուսակցության ղեկավար, Վազգեն Մանուկյանը կորցրեց իր ազդեցության ամենահիմնական հենարանը՝ հայտնվելով հիրավի մեկուսացման մեջ եւ իրապես կորցնելով հաջորդ նախագահական եւ պառլամենտական ընտրություններին որեւէ լուրջ հաջողության հասնելու հեռանկարը: Հենց դա նկատի ունեն այժմ ԱԺՄ-ում դեռեւս հատուկենտ մնացած Մանուկյանի համախոհները, երբ իշխանություններին սկսեցին մեղադրել իրենց ղեկավարին քաղաքական պայքարի ասպարեզից հեռացնելու նախաձեռնության մեջ: Որպես հավաստում նրանք մատնանշում են դարձյալ Դավիթ Վարդանյանի նախարար լինելու հանգամանքը եւ այն, որ լինելով իր գերատեսչության լիիրավ տեր ու տնօրենը, նա ԱԺՄ-ականների մի մասին տարբեր պաշտոններով կարողացել է հրապուրել:

Շարունակական պառակտումները մեկ անգամ եւս հաստատեցին, որ իշխանատենչության մոլուցքը քաղաքական շրջանակներում այնքան է արմատացած, որ անտեսում է ցանկացած գաղափարախոսության եւ լիդերի ազդեցությունը: ԱԺՄ-ն այլեւս չի կարող հուսալ, որ եկող ընտրություններին կարող է ժողովրդի վստահությանն արժանանալ:

Ընդհանրապես այս կուսակցության հետ կատարվածը որոշակիորեն առանձնանում է քաղաքական դաշտում գրեթե զուգահեռաբար սկսված պառակտումներից (ՀԺԿ, Կոմկուս): Եթե մյուս դեպքերում դեպի ընդդիմություն գնացող հոսանքից պոկվում էին իշխանությանը հիշ թե շատ հարողները, ապա ԱԺՄ-ի պարագայում լրիվ հակառակն է: Սակայն պետք է արձանագրել, որ քաղաքական ուժերի շարունակական քայքայումները, որոնք, ինչ խոսք, բացասաբար են անդրադառնում ողջ քաղաքական դաշտի կայացման վրա, մեկ դրական տարր են պարունակում. քաղաքական ուժերը զգվելով ինքնամաքրման գործընթաց են սկսել՝ թեկուզեւ ընդամենը ճշտելով իրենց իշխանամետ-ընդդիմադիր լինելը: Սակայն հանուն ինչի՞ է դա տեղի ունենում, ի՞նչ գնով եւ ո՞ւմ է ձեռնտու՝ գոնե այսօր դեռեւս որոշակի չէ:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցողիկ բալերի որոշակի անկում...

Սկիզբը էջ 1

Առաջադիմությունն իջել է նաեւ անգլերեն առարկայից, իսկ այս առարկան, ինչպես հայտնի է, պարտադիր է այն դիմորդների համար, ովքեր վերը նշված բարձր վարկանիշ ունեցող ֆակուլտետներն ընդունվելու ցանկություն ունեն. անցյալ տարի այդ առարկայից 20 միավոր ստացած 293 դիմորդի փոխարեն այս տարի 20 միավոր են ստացել 126-ը, եւ նման արդյունքը 2001-ի ընդունելության քննությունների տաճ «անակնկալներից» մեկն էր: Ի համեմատ նախորդ տարվա արդյունքների՝ 20 միավոր ստացած դիմորդների թիվը նվազել է նաեւ մաթեմատիկա առարկայից՝ 463-ից հասնելով 320-ի: Իջել է առաջադիմությունը հայ ժողովրդի պատմություն առարկայից: Արդյունքների որոշակի լավացում է արձանագրվել կենսաբանություն եւ անգլերեն-բանավոր առարկաների գծով: «Ի հաշիվ 19 եւ 20 միավորների կրճատման՝ այս տարվա ընդունելության քննությունների արդյունքում ավելացավ 16 եւ 17 միավորների արժեքը», նշեց նախարարը:

Ի դեմ, հերքելով այս ուսումնական տարվա սկիզբը հետաձգելու վերաբերյալ լուրերը, Էդուարդ Ղազարյանը հայտնեց, որ դասերը սկսվելու են սեպտեմբերի 1-ին՝ չնայած այդ օրը շաբաթ է: Հայտնեց նաեւ, որ ցուցակներն արդեն հրապարակված են:

Ինչպես ամեն տարի, այս տարվա ընդունելության քննություններն էլ չեն անցել առանց բողոքարկումների: Նախարարը տեղեկացրեց, որ բողոքարկման առաջին փուլում դիմորդների թիվը կազմել է 2 հազար 200, իսկ բողոքարկման արդյունքում փոփոխվել է 480-ի: Երկրորդ փուլում վերանայվել է 260-ի գնահատականը: Նիշերը փոփոխվել են հիմնականում 1 միավորի տարբերությամբ, եղել են նաեւ մի քանի թյուրիմացություններ, որոնք, նախարարի վկայությամբ, բողոքարկման արդյունքում շտկվել են: Ինչ վերաբերում է մեդալակիրներին, նրանց գերակշիռ մասը դիմել է պետհամալսարան՝ արդեն թվարկված բարձր վարկանիշ ունեցող ֆակուլտետներ: Բժշկական համալսարանում, նախարարի արձանագրմամբ, փոքր-ինչ մտահոգիչ պատկեր է ստեղծվել այն առումով, որ վճարովի համակարգ հաջողվում է ընդունվել բոլոր դիմորդներին՝ նույնիսկ ամենացածր միավորները ստացած: Պատճառն այն է, որ բժշկական համալսարանում ուսման վճարը բավականին բարձր է, եւ պետպատվերի համակարգում սովորել ցանկացող դիմորդները որպես այլընտրանք երբեմ չեն նշում այս բուհի վճարովի համակարգը՝ նախընտրելով նշել այլ բուհերի առավել «դյուրամարս» ֆակուլտետները: Այս առումով նախարարը խորհուրդ տվեց, որ բժշկական համալսարանի ղեկավարությունը լրջորեն մտածի հարցի առնչությամբ՝ վերանայելով վճարների չափը:

Հայ-ռուսական ռազմավարական համագործակցությունը չի ոգեւորում Համաշխարհային բանկին

Սկիզբը էջ 1

Ընդ որում, ԱՄՆ-ը եւ ՀԲ-ն լոբբիինգ էին տանում ամերիկյան մասնավոր «AES Silk Road»-ի օգտին, ՎՁԵԲ-ը՝ «Union Fenoza»-ի, իսկ Ռուսաստանը պարտքերը չվճարելու պատճառաբանությամբ ակնարկում էր Հայաստան գազի մատակարարման դադարեցման մասին, որի մատակարարը նույն «Իտեռան» էր եւ է: Ըստ էության, ԲԷՑ-երի սեփականաշնորհման հարցը դուրս է եկել տնտեսական շահերի շրջանակներից՝ տեղափոխվելով քաղաքական եւ աշխարհաքաղաքական հարթություն: Այդ օրերի հայկական մամուլն ինքնարտահայտման յուրահատուկ հնարավորություն էր ստացել. բնականաբար հաշվի առնելով ՀԲ-ի եւ ԱՄՆ-ի ֆինանսական կառույցները, թերթերիս մեծ մասը հասկանալի պատճառներով պատշաճում էր «AES Silk Road»-ի ընտրությունը: Նշենք, որ այդ ժամանակահատվածում հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունները տվեցին առաջին ճաքերը. ռուսական կողմը մի շարք առիթներով հասկացրեց, որ դժգոհ է երեւանի վարած «էներգետիկ» քաղաքականությունից:

Վերջին ամիսներին (որպես մեկնարկային կետ կարող եք ֆիքսել մայիսին Երեւանում կայացած Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ երկրների նախագահների հանդիպումը) հայ-ռուսական հարաբերություններում առկա հակասությունները կարծես թե հարթվում են, ռուսական կողմը «մոռացել» է Հայաստանի 114 մլն դոլար պարտքը: Սեպտեմբերի 14-16-ը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի պաշտոնական այցը Երեւան, անշուշտ, նոր որակ կհաղորդի հայ-ռուսական ռազմավարական գործակցությանը: Վկայակոչելով կառավարական աղբյուրներ, «Կոմերսանտը» օգոստոսի 18-ին «ՀԲ դիրքորոշումը կարող է խափանել Ռուսաստան-Հայաստան պարտքային գործարքը եւ Պուտինի այցը» հոդվածում գրում է, թե հայկական արդյունաբերական ձեռնարկությունների հիմքի վրա հայ-ռուսական համատեղ ձեռնարկություններ ստեղծելով եւ դրանց բաժնետոմսերի մեծ մասը ռուսական կողմին փոխանցելով կմարվի Հայաստանի՝ Ռուսաստանին ունեցած 114 մլն դոլար պարտքը: Թվում է, թե՛ Երեւանը, թե՛ Մոսկվան կողմ են պարտքերի մարման այս տարբերակին. Հայաստանն ուղղակի հնարավորություններ չունի մարելու 114 մլն-ը, հայ-ռուսական համատեղ ձեռնարկությունների ստեղծմամբ ավելի կամրապնդվեն երկկողմ կապերը, տնտեսությունը հնարավոր կլինի վերակենդանացնել, իր հերթին Ռուսաստանը հասկանում է, որ Հայաստանը գրեթե անհուսալի պարտապան է, բացի դրանից, կովկասյան տարածաշրջանում ամրապնդվելու առումով չափազանց կարեւոր է Արեւմուտքին՝ ի դեմս ԱՄՆ-ի, չզիջել տնտեսական դիրքերը: Ի դեմ, հուլիսի 20-ին Հայաստան կատարած եռօրյա այցի ավարտին տնտեսական համագործակցության հարցերով ռուս-հայկական միջկառավարական հանձնաժողովի ռուսական կողմից համանախագահ, ՌԴ փոխվարչապետ Իլյա Կլեբանովը Երեւանում հայտարարեց. «Մեր հայ գործընկերների հետ փորձում ենք հիմք դնել տնտեսական եւ քաղաքական ինտեգրացմանը, եւ ինձ թվում է, մեզ դա հաջողվեց»:

ՀԲ-ն ակնհայտորեն դժգոհ է ոչ միայն հայ-ռուսական սերտ հարաբերությունների ներկա մակարդակից, այլեւ հայ-ռուսական «Սեփականություն՝ պարտքի դիմաց» ծրագրի իրականացումից: Այսպես, ՀՀ-ում ՀԲ գրասենյակի մամլո պատասխանատու Վիգեն Սարգսյանը «Կոմերսանտին» ասել է, որ պարտքերի դիմաց հայկական ձեռնարկությունները ռուսական կողմին տրամադրելը պարտքերը փակելու լավագույն տարբերակը չէ եւ տնտեսապես ձեռնտու չէ Հայաստանին: «Կոմերսանտի» օգոստոսի 20-ի համարում ՀՀ պատգամավորության նախագահ Սերժ Սարգսյանը, որ միաժամանակ տնտեսական համագործակցության հարցերով ռուս-հայկական միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի համանախագահն է, ասել է. «Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի որոշելու, թե ինչ ճանապարհով է զարգացնելու իր տնտեսությունը»:

Հուլիսյան այցի օրերին Իլյա Կլեբանովը նաեւ հայտարարեց, որ Ռուսաստանը կմասնակցի Հայաստանի ԲԷՑ-երի մասնավորեցմանը: Չի կարելի բացառել, որ հենց ռուսական որեւէ ընկերություն, ենթադրաբար «Իտեռան», կարող է դառնալ ԲԷՑ-երի սեփականատերը: Ամեն դեպքում տպավորությունն այնպիսին է, որ Հայաստանի իշխանությունները, ինչպես 1-1,5 տարի առաջ էր, տեղի չեն տա ԱՄՆ-ի եւ ՀԲ-ի ճնշումներին: Ինչ վերաբերում է «Կոմերսանտի» ենթադրությանը, թե ՀԲ-ի դժգոհության պատճառով Պուտինի այցը կարող է եւ չկայանալ, ապա դա հիշ հավանական է: Ի վերջո պարզ է, որ ի տարբերություն ՀԲ-ի, որը ջրամբարների անվտանգության բարելավման եւ նմանատիպ անհեթեթ այլ վարկերով Հայաստանը թաղել է պարտքերի մեջ, կամ ի տարբերություն ԱՄՆ-ի, որը Հայաստանը տեսնում է լոկ որպես զբոսաշրջության երկիր, Ռուսաստանի հետ եւ օժանդակությամբ է հնարավոր վերակենդանացնել եւ վերականգնել Հայաստանի տնտեսությունը:

Եղիշե ավ. քհն. Սարգսյան. «Ճեմարանի այսօրվա ուսանողն է Հայ եկեղեցու ապագա հոգեւորականը»

Գեւորգյան ճեմարանում ընդունելության քննություններ են

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում օգոստոսի 23-25-ը ընդունելության քննություններ են: 100-ից ավելի դիմորդներ ցանկանում են դառնալ Գեւորգյան ճեմարանի կամ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրոցի սաներ:

Գեւորգյան ճեմարանում ընդունելության տեղերի խիստ սահմանափակում չկա: Ըստ ճեմարանի տեսուչ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանի, առաջին լսարան կարող են ընդունվել մինչեւ 30 դիմորդներ, որոնք, իհարկե, ընդունելության քննությունների ընթացքում կստանան բարձր նիշեր՝ հանձնելով քննություններ հայոց լեզու (գրավոր եւ բանավոր), հայ ժողովրդի պատմություն, անգլերեն, ռուսերեն եւ երաժշտություն առարկաներից:

1874 թ. Գեւորգ Դ կաթողիկոսի նախաձեռնությամբ հիմնված հոգեւոր ճեմարանը ժամանակի ամենահեղինակավոր կրթօջախն էր Հայաստանում: Ճեմարանի գործունեության շուրջ 100 տարիների ընթացքում (ճեմարանը փակվել է 1917-ին եւ վերաբացվել միայն 1945-ին) այստեղ են ուսանել հայտնի հոգեւորականներ ու մտավորականներ. Գեւորգ Զ եւ Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետները, Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսը, Կոմիտասը, Լեւոն Շանթը, Մանուկ Աբեղյանը, Ակսել Բակունցը եւ ուրիշներ:

Պատմական ճեմարանն այսօր շարունակում է հոգեւոր իր առաքելությունը՝ Հայ եկեղեցուն տալով ուսյալ սպասավորներ: Ներկայումս ճեմարանի 6 լսարաններում սովորում է ավելի քան 100 ուսանող: Դասավանդվող 47 առարկաներից 25-ը կրոնական է: Ճեմարանի ուսուցչախումբը Ամենայն հայոց հայրապետն է: Հոգեւոր դպրոցի սաներին գիտելիքներ են հաղորդում 40-ից ավելի դասախոսներ՝ աշխարհական եւ հոգեւորական:

Ճեմարանի ներկայիս գործունեության եւ Հայ եկեղեցու ապագա սպասավորի կրթությանը վերաբերող հարցերին է պատասխանում ճեմարանի տեսուչ Տ. Եղիշեն:

– **Տեր հայր, ովքե՞ր կարող են դառնալ ճեմարանի ուսանողներ եւ ի՞նչ պահանջներ են դրվում ուսանողի առջեւ:**

– Հոգեւոր ճեմարան կարող են ընդունվել մինչեւ 21 տարեկան միջնակարգ կրթություն ունեցող հայ երիտասարդներ թե՛ Հայաստանից եւ թե՛ սփյուռքից: Ուրախալի է, երբ ճեմարան են դիմում բարձրագույն կրթությամբ երիտասարդներ, որոնք ցանկանում են սանալ նաեւ կրոնական հիմնավոր գիտելիքներ եւ ծառայել եկեղեցուն: Այս տարի կան նաեւ այդպիսիք: Նրանց թվում է, օրինակ, Աճառյանի անվ. համալսարանի միջազգային հարաբերությունների բաժինը փայլուն առաջադիմությամբ ավարտած մի դիմորդ: Եվ չնայած տարիքային խնդրին (դիմորդը 22 տարեկան է), պիտի խնդրենք Նորին Սրբության արտոնությունը՝ որպես բացառություն նրան ընդունելու համար:

Քննական հանձնաժողովը չափազանց խստապահանջ է Հայ եկեղեցու ապագա մշակների ընտրության հարցում, որի հիմնական չափանիշը խորը գիտելիքների առկայությունն է: Այսօր ճեմարանը լծված է մի առաքելության՝ պատրաստել ուսյալ, հոգով ու հավատքով ուժեղ հոգեւորականներ:

– **Ճեմարանական կյանքը չափազանց խստակյաց է: Լինո՞ւմ են դեպքեր, երբ ուսանողը հեռացվում կամ ինքն է լքում ճեմարանը:**

– Իրապես, բավական խիստ է ուսանողի օրվա ռեժիմը: Ճեմարանի սանը արթնանում է առավոտյան 6-ն անց 30-ին: Կարճատեւ մարզանքից հետո մասնակցում է առավոտյան ժամերգությանը, ապա՝ նախաճաշ: 9 անց տասը ողջերն արդեն ճեմարանում կանգնած են աղոթքի: Հետո սկսվում են դասերը եւ շարունակվում 6 ժամ: Օրվա մնացած հիմնական ժամանակը տրամադրվում է սեփական ուսմանը, որն ընդմիջվում է կարճատեւ հանգստով եւ երեկոյան ժամերգությամբ: 10-10:30 գիշերային աղոթք եւ ապա՝ քուն: Ողջ այս ընթացքում ճեմարանի սանը գտնվում է Մայրավանքում եւ կարող է բացակայել միայն տեսչի գիտությամբ:

Երկրորդ տարին է, ինչ ճեմարանի տեսչի պաշտոնում եմ, եւ, ցավոք, այս ընթացքում մի քանի հեռացման դեպք է արձանագրվել: Պատճառը անբավարար վարքն է եւ կամ ուսման ցածր առաջադիմությունը: Այդ հարցում չափազանց բծախնդիր ենք: Երկրորդ տարին է նաեւ, որ առավել խստապահանջ ենք ավարտաճառերի պաշտպանության հարցում: Վեհափառ հայրապետի կարգադրությամբ 6-րդ լսարանն ավարտած ուսանողը չի կարող հանձնել ավարտաճառի քննություն առանց սարկավագական աստիճան ունենալու: Իսկ վերջինիս համար պահանջվում է հանձնել սարկավագական քննություն, որը երբեմն ուսանողը նույնպես չի կարողանում հաղթահարել: Օրինակ, նախորդ տարվա 27 շրջանավարտներից 4-ը չի կարողացել հանձնել այդ քննությունը: Աշնանը նրանց կտրվի եւս մեկ հնարավորություն: Կրկնակի անհաջողության դեպքում նրանք կկարողանան իրենց հոգեւոր ծառայությունը մատուցել միայն որպես դպիր Մայր Աթոռից դուրս որեւէ եկեղեցում:

– **Տեր հայր, դուք 1945 թ. վերաբացված ճեմարանի առաջին շրջանավարտներից եք, մի շրջան, երբ Հայ եկեղեցին կարոտ էր նոր հոգեւորականների: Այսօր եւս հաճախ է նշվում, որ Հայ եկեղեցում հոգեւորականների եւ հատկապես ծխական քահանաների զգալի պակաս է: Որքան հայտնի է, այդ բացն առավել արագ լրացնելու համար առաջարկվում էր ճեմարանում կազմակերպել արագացված դասընթացներ ծխական քահանաներ պատրաստելու համար:**

– Այս բացն, իհարկե, խորհրդային տարիների ժառանգություն է: 40-ականներին արդեն գրեթե հոգեւորական չունեինք. մի մասը ախտորվել էր, ծերերը մահացել էին: Մայր Աթոռում մնացել էր ընդամենը երկու հոգեւորական՝ Գեւորգ արք. Չորեքյանը (հետագայում ազգընտիր կաթողիկոս) եւ Մատթեոս վրդ. Աճենյանը: Այս պայմաններում էր, որ վերաբացվեց Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանը: 1951 թ. Գեւորգ Զ կաթողիկոսը մեծագույն հրճվանք ապրեց, տեսնելով իր իսկ կողմից վերաբացված ճեմարանի առաջին 9 շրջանավարտներին: Այսպիսով սկսվեց կրթվել հոգեւորականների նոր սերունդ՝ սակայն շատ սահմանափակ թվով: Այսօր ճեմարանն ունի այնքան ուսանող, որքան երբեւէ:

1951 թ. նոյեմբեր. ճեմարանի առաջին շրջանավարտները:

Ինչ վերաբերում է վերջին հարցումին, թույլ տվեք որոշ ճշտում մտցնել: Անցած ուսումնական տարվա սկզբին Վեհափառ հայրապետի գլխավորությամբ մշակվեց ծրագիր նոր ընդունվածների համար: Ըստ այդ ծրագրի, 5-րդ կուրսից հետո նրանք, ովքեր կցանկանան Հայ եկեղեցուց ներս իրենց ծառայությունն իրականացնել իբրեւ ամուսնացյալ քահանա, կձեռնադրվեն քահանաներ: Նրանք, ովքեր կցանկանան եւ ունակ են շարունակելու ուսումը, կսովորեն եւս երկու տարի, որն արդեն հավասարազոր կլինի ասպիրանտուրային: Այս ուսանողները հետագայում կձեռնադրվեն կուսակրոն քահանաներ: Այս ամենն առայժմ միայն ծրագիր է:

Ամեն դեպքում Վեհափառ հայրապետի մոտեցումը հետեւյալն է. այլեւս չի լինելու ամուսնացյալ կամ կուսակրոն թերուս քահանա: Ճեմարանի այսօրվա ուսանողն է մեր եկեղեցու ապագան, եւ նա է կրելու Հայ եկեղեցու հոգսը 21-րդ դարում: Ես հավատում եմ եւ համոզված եմ, որ մեր ուսանողները գիտակից են իրենց՝ այս առաքելությանը:

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Հաշտարար հանձնաժողովի» անդամները խորացնում են պառակտումը

Այս վերնագրի ներքո «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի խմբագիր Բուրք Հաշտարակիչ Հարութ Սասունյանը անդրադառնում է «Հայ-եւ հայտարակիչ Հարութ Սասունյանը անդրադառնում է «Հայ-թուրք հաշտարար հանձնաժողովի» անդամ Վան Գրիգորյանի վերջին հրապարակումներին, որոնք ներկայացվել են նաեւ մեր թերթում:

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի հայազգի անդամներն անցյալ շաբաթ երկու հաղորդագրություն հրապարակեցին՝ բուռն հարձակումների ենթարկելով այն բոլոր կազմակերպություններին ու անհատներին, որոնք անհամաձայնություն էին ցուցաբերել իրենց վաս մտահղացված նախաձեռնության նկատմամբ:

Ցավալի է, որ փոխանակ գիտակցելու այն լուրջ վնասը, որ նրանք հասցնում են հայ ազգային շահերի հետաքրքրմանը, հանձնաժողովի չորս հայ անդամները ուժեղ ընդդիմության են ենթարկում բոլոր նրանց, ովքեր արտահայտում են իրենց արդարացի մտահոգությունները:

Բոլոր չորս անդամների կողմից ստորագրված օգոստոսի 1-ի հաղորդագրության մեջ նշվում էր, որ «աշխարհի չորս կողմերից հայերի մեծամասնությունը պաշտպանում է հանձնաժողովի ստեղծումը»: **«Ազգ»** թերթը հերքեց այդ հաղորդագրությունը, գրելով, որ «հաղորդագրությունը ստորագրողները պարզապես ստում են»:

Այնուհետեւ հանձնաժողովի անդամներն այդ հաղորդագրության մեջ իրենց ընդդիմադիրներից պահանջում էին նշել, թե իրե՛նք ի՞նչ են արել կամ ի՞նչ են մտադիր անել՝ մեր առաջ ծառացած խնդիրները լուծելու համար: Նրանք համարձակորեն հայտարարում էին, որ «հայ ժողովուրդը հավատը կորցրել է դեմագոգների սուտ խոստումների նկատմամբ»: **«Ազգը»** գրեց, որ հաղորդագրությունը «լի է անընդունելի տեսակետներով», եւ որ Հայկական համագումարը պարզապես ՀՀՇ-ի քարոզչական ջրաղացին ջուր է լցնում:

Օգոստոսի 4-ին «Կռունկ» լրատվական ցանցը հրապարակեց երկար մի հարցազրույց հանձնաժողովի երկու անդամների՝ Անդրանիկ Միհրանյանի եւ Վան Գրիգորյանի հետ: Պրն Միհրանյանը, որն ապրում է Մոսկվայում, հարցերին տվել է տրամաբանական եւ հավասարակշռված պատասխաններ: Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանը, մյուս կողմից, անպատասխանատու արտահայտություններ է արել կամ էլ հարցերին պատասխանել բավական ագրեսիվ ձեւով: Երկուսն էլ խուսափողական պատասխաններ են տվել առաջին չորս հարցերին՝ ինչպե՞ս եւ ովքե՞ր են մոտեցել իրենց հանձնաժողովին անդամակցելու խնդրանքով, ինչո՞ւ չորս հայեր եւ վեց թուրքեր են ընդգրկված դրանում, ուրիշ ո՞ւմ էին խնդրել, որ մերժել է անդամակցել, ինչո՞ւ չեն ընդգրկված այնպիսի թուրք գիտնականներ, որոնք ընդունում են Հայկական ցեղասպանության փաստը: Նրանք խուսափել են պատասխանել նաեւ այն հարցին, թե հանձնաժողովի ստեղծման հարցում ո՞րն է եղել Թուրքիայի, Հայաստանի եւ ԱՄՆ կառավարությունների դերը: Դժբախտաբար, նրանց ֆինանսավորող բյուջեի ակունքի եւ քանակի մասին հարց չի տրվել երկու հայ անդամներին:

Պրն Գրիգորյանի պատասխաններին մեծ մասը կամ կովարար տոնով էր ասված, կամ էլ վիրավորական էր հնչում: Այն հարցին, թե Հայկական համագումարը միեւնույն թափով շարունակելո՞ւ է Մ. Նահանգների Կոնգրեսում հոգնուս Հայկական ցեղասպանության ճանաչման տարած աշխատանքը, նա պատասխանել է. «Բարեբախտաբար, հայերի մեծ մասը նման բան լսելիս հասկանում է դրա անհեթեթությունը եւ ձեր խոսքի մեջ օգտագործված ենթադրություններն ընկալում է իբրեւ այդպիսիք»:

Տրամիզոնի զարգացման անհաջող փորձերին որպես մասնակից, նրան հարց են տվել, թե արդյոք նա հասարակությանը կբացահայտի՞ իր ֆինանսական հաշվեկշիռը՝ վստահեցնելու համար, թե ներկայիս Թուրքիայի կամ թուրքերի հետ գործարարական առնչություններ չունի: Նա հերքել է, որ ինքը կամ Համագումարի այլ պատասխանատու անձ դեմ է գնացել Համագումարի «շահերի բախման» քաղաքականությանը: Ապա ավելացրել է. «Հակառակը պնդող կեղծ բամբասանքներ տարածող մարդիկ պետք է իրենք իրենցից ամաչեն: Տրամիզոնի ծրագիրը եղավ բազմաթիվ բամբասանքների եւ չարամիտ զրպարտությունների առարկա: Խնդիրը պարզ է ու մեր գործելակերպը ոչ արատավոր, եւ Հրայր Հովնանյանն ու ես վաղուց դադարել ենք ուշադրություն դարձնել այն մարդկանց վրա, ովքեր նման արատավոր գործելակերպի են դիմում»:

Փորձելով պաշտպանել Ալեքսանդր Արզումանյանի եւ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ազգայնական վարկը, նա ավելացրել է, թե «արժե նշել, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների մեծ մասն այն ճանաչել է, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը նախագահ էր, իսկ Ալեքսանդր Արզումանյանը՝ արտաքին գործերի նախարար»:

Դժբախտաբար, նա չարաչար սխալվում է, քանի որ Տեր-Պետրոսյանի 6,5 տարվա պաշտոնավարության ընթացքում միայն չորս երկիր է ճանաչել Ցեղասպանությունը, մինչդեռ Քոչարյանի 3,5 տարվա պաշտոնավարության ընթացքում՝ յոթ երկիր: Բայց նաեւ ճիշտ չէ այդ հաջողությունները վերագրել միայն երկու նախագահներին եւ նրանց օգնականներին, քանի որ սփյուռքը նաեւ շատ մեծ դեր ունեցավ այդ հարցում:

Այդ նույն հարցազրույցում պրն Գրիգորյանն արհամարհական արտահայտություններով է հանդես եկել Հայ դատի եւ ՀՅԴ-ի հասցեին, հաստատելով, որ Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի ստեղծումը պառակտում է առաջացրել քարոզչական երկու կազմակերպությունների՝ Հայ դատի եւ Հայկական համագումարի միջեւ: Նա նշել է, որ «մինչեւ հանձնաժողովի ստեղծումն այդ կազմակերպությունները (ANCA-ՀՅԴ) համամիտ էին մեր կոնգրեսական ռազմավարությանը»: Նա հակասել է իր գործընկեր պրն Արզումանյանին, որն ավելի առաջ մեկ ուրիշ հարցազրույցում ասել էր, թե «այդ կազմակերպությունները լավագույն հարաբերությունների մեջ են եղել միշտ, եւ մտահոգության պատճառ չկա»:

Պրն Գրիգորյանը 3 հիմնական չափանիշներ է մատնանշել անդամների ընտրության համար. ազգային եւ միջազգային մակարդակով քաղաքական գործունեության նշանակալի փորձ, անգլերենի սահուն իմացություն, թիմային աշխատանք կատարելու պատրաստակամություն:

Եվ այն հարցին, թե ինչո՞ւ Հայ դատի անդամներին չեն ընդգրկել հանձնաժողովի կազմում, նա պատասխանել է. «Մենք հիմա չգիտենք որեւէ մեկին ՀՅԴ/ԱՀԱԿ-ի շարքերում, ով կհամապատասխաներ հանձնաժողովի անդամ լինելու չափանիշներին»:

Դժբախտաբար, ճշմարտությունն այն է, որ բացի պրն Միհրանյանից, հանձնաժողովի մյուս երեք անդամները իրե՛նք չեն համապատասխանում այդ չափանիշներին:

Այժմ միանգամայն հստակ է մի բան. նախքան թուրքերի հետ հաշտեցումը, հայերս պետք է մեկս մյուսի հետ հաշտվենք: Հանձնաժողովի ներկա անդամները մոռանում են, որ իրենց անողոք արարքներով եւ խոսքերով լուրջ պառակտում են ստեղծել ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհասփյուռ հայկական համայնքներում:

Մեկ անգամ եւս դիմում եմ հայրենի եւ սփյուռքի ղեկավար անձնավորություններին՝ շտապ միջոցներ ձեռնարկել կացությունը փրկելու համար, քանի է՛լ ավելի չի խորացել պառակտումը եւ չեն վտանգվել մեր ազգային շահերը:

Իրավիճակ

«Ամերիկյան երազ» եւ իրականություն

Հայ բանտարկյալները Կալիֆոռնիայում

Կալիֆոռնիայի նահանգի բանտերում տեղերը չեն բավականացնում. ներկայումս պետությունն այնտեղ 35 նոր բանտ է կառուցում: Իսկ այժմ գործում են 11 տեղական, 35 պետական եւ 11 դաշնային բանտեր: Բավարար կենսապայմաններից զուրկ եւ արագ հարստանալու մարմաջով բռնված ներգաղթյալներից շատերը հայտնվում են բանտերում: Հայերը բացառություն չեն կազմում: Հեռաքննությունների դաշնային բյուրոյի տվյալներով, միայն Կալիֆոռնիայի նահանգում բանտարկված հայերի թիվն այժմ հասնում է 14339-ի: Մեծ մասը դատապարտված է թմրադեղերի վաճառքի, գողության, կավատության համար: «Լոս Անջելես թայմսի» անցկացրած հետազոտությունը ցույց է տալիս, որ նահանգի բանտերում խոսող 200 լեզուների մեջ հայերենը 4-րդ տեղն է զբաղեցնում իսպաներենից, վիետնամերենից եւ կորեերենից հետո:

Կալիֆոռնիայի բանտերում լավ են ճանաչում Նազարեթի ավետարանական եկեղեցու հովիվ Պետրոս Հաջյանին: Նա խուսափում է բարձրաձայնիկ ճաշկերույթներից եւ ջանք չի խնայում մասնավորապես հայ բանտարկյալների վիճակը թեթեւացնելու եւ նրանց աղավեն կանգնելու: Հաջյանը ցավով նշում է, որ հայ համայնքը չի ուզում տեսնել աղետալի երեւույթը: «Երեք տարի առաջ այցելեցի երկու հայ կաթողիկոսներին: Կալիֆոռնիայի բանտերում արդեն 7000 հայ կար, եւ ես կանխագուշակեցի, որ նրանց թիվը կրկնապատկվելու է: Երկու վեհափառները դա համարեցին չափազանցություն եւ տարատեսակ խոստումներ տվեցին ինձ: Մինչդեռ ես նրանց ներկայացրել էի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները», հայտարարեց Հաջյանը «Նուվել դ'Արմենի» ամսագրի թղթակցին:

Նահանգում կենցաղային բռնարարքների գծով նույնպես հայերն աչքի են ընկնում: Հարկ է նշել, որ տարբեր ազգությունների ներկայացուցիչները բանտերում հայտնվում են տարաբնույթ պայմաններում: Այսպես, հրեա 500 կալանավորին ընկնում է 120 ռաբբի: Հրեական համայնքը հոգում է փաստաբանական ծառայության, սննդի եւ ուսուցչի ծախսերը: Մինչդեռ հայ համայնքի բոլոր բանտարկյալների հոգսերի բեռը կրում է միայն մեկ սոցիալական աշխատող:

Պետրոս Հաջյան

Ճիշտ է, ոստիկանությունն ազգությունների միջեւ որոշ խտրություն է դնում, բայց ամենամեծ խտությունն իրականացվում է դպրոցում: Հայաստանից եկած հայերը պարտավոր են քննություն հանձնել: Մաթեմատիկայից նրանք, որպես կանոն, բարձր գնահատականներ են ստանում: Մինչդեռ անգլերենի իմացությունը մեծ մասամբ շատ ցածր է գնահատվում: Ուստի հայերին սովորաբար ուղարկում են կրթական հատուկ խմբեր, որոնք նախատեսված են թույլ աշակերտների համար: Ուսումն ավարտելուց հետո նրանց տրվում է համապատասխան վկայական, որը փորձանք է դառնում ամբողջ կյանքում եւ բացառում որեւէ լուրջ աշխատանքի հնարավորությունն անգամ: Կամա թե ակամա այդ հայերը հայտնվում են հանցագործների միջավայրում: Թմրադեղերի առեւտուր, գողություն, կավատություն... Ի վերջո նրանք բանտարկվում են: Այսպիսով, հիշյալ «փաբլիք սքուլ»-ները (հանրային դպրոց) պոտենցիալ հանցագործներ են պատրաստում:

Ի դեմ, հայ բանտարկյալների հոգսերով պարող հոգեւոր հովիվ Հաջյանը եւս անցյալում բանտարկված է եղել: Այդ նախկին լիբանանահայը մանկուց ճաշակել է լվածության եւ մերժվածության դառնությունը: Կալիֆոռնիայում հասարակության անարդարությունների դեմ հանդիման նա միայն մեկ ելք գտավ՝ սեփական բռունցքները: Նա հաճախ էր կռվում շրջապատի մեքսիկացիների հետ եւ մի քանի անգամ դատապարտվեց կարճաժամկետ բանտարկության: Մի անգամ էլ 8 ամսով բանտարկվեց գողության համար: Հուսահատության պահին ըմբռնեց, որ Աստված իր միակ աղավենն է: Սկսեց զբաղվել տեղեկագիտությամբ, ամուսնացավ, բայց չմոռացավ նախկին բախտակիցներին՝ բանտարկյալներին, որոնց օգնելն այժմ իր գլխավոր զբաղմունքն է: Նա վերհիշում է հայերի ու մեքսիկացիների բանտային կատաղի բախումները: Այսօր Հաջյանը կարողացել է հաշտեցնել նրանց:

Հաջյանն առաջարկում է հայ բանտարկյալների համար ստեղծել 1000 տեղանոց վերականգնողական կենտրոն, որը կարելի է բացել միայն համայնքի ուժերով: Իսկ առայժմ Հաջյանի կենտրոնն օթեւան, խորհրդատվություն է տրամադրում երկու տասնյակ բանտարկյալների, ինչպես նաեւ աշխատանք է գտնում նրանց համար:

Պ. Բ.

Ալբանացիները պայթեցրել են ուղղափառ եկեղեցի

ՍԿՈՊԻԵ, 22 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օգոստոսի 21-ի երեկոյան ալբանացի գրոհայիններ Տետովոյից ութ կիլոմետր հեռավորությամբ գտնվող Լեշոկ գյուղում պայթեցրել են ուղղափառ վանքի եկեղեցիներից մեկը: 14-րդ դարում կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին գործնականում ամբողջությամբ ավերվել է, նրանից մնացել են երկու գմբեթ եւ ճակատային մի հատված: Վանական համալիրը տեղավորված է Շար լեռան վրա՝ Տետովոյից դեպի հյուսիս: Պայթեցված եկեղեցուց բացի տաճարային համալիրի մեջ մտնում են նաեւ Սուրբ Անաստասիայի տաճարը եւ Սուրբ Ղազարի եկեղեցին: ԱՄՆ պետդեպարտամենտի պատասխանատու ներկայացուցչի տեղակալ Ֆիլիպ Ռիտերը մամլո ասուլիսում Վաշինգտոնի անունից կտրականապես դատապարտել է մակեդոնական վանքի ավերումը: Ընդ որում՝ նա ընդգծել է, որ ԱՄՆ-ը «դատապարտում է մշակութային եւ կրոնական վայրերի ավերման բոլոր ակտերը», հաղորդում է «Ֆրանսպրես» գործակալությունը:

Սիրիական զորքը կրկին Բեյրութում է

Բեյրութում սիրիական զորքերը ներկա էին 1976 թվականից, բայց քաղաքից հեռացել էին այս տարվա հունիսին, երբ մերձավորարեւելյան խնդրի կարգավորման հույսեր էին հայտնվել: Օգոստոսի 20-ին, սակայն, սիրիական 15 տանկեր հատեցին Լիբանանի սահմանը եւ շարժվեցին դեպի Բեքաայի հովիտ, որտեղ արդեն իսկ տեղաբաշխված է Լիբանանի կառավարության հավանությամբ երկրում գտնվող սիրիացի 20 հազար զինվորների մեծ մասը:

Լիբանանում իր ռազմական ներկայությունն ուժեղացնելով՝ Սիրիան փաստորեն աջակցում է այդ երկրի կառավարությանը, որը ներկայումս քրիստոնյա ակտիվիստների ծերբակալություններ է սկսել: «Ֆիգարո» թերթը գրում է, որ Լիբանանում իրավիճակն օրեցօր վատթարանում է: «Ան Նահար» թերթը հաղորդում է, որ երկուշաբթի օրվանից սիրիացի զինվորականները բեռնատարներով Բեքաայի հովտից տեղափոխվում են Բեյրութ:

Մայրաքաղաքում վերլուծաբանները կարծում են, որ սիրիական ուժերի ներկայությունն ավելի շատ խորհրդանշական բնույթ է կրում, քան ռազմավարական: Դրանով Սիրիան իր համերաշխությունն է հայտնում Լիբանանի կառավարությանը, որը վերջերս սկսել է ավելի հաճախ խոսել երկիրը մասնատելու Իսրայելի դիտավորությունների մասին:

Լիբանանյան բանակի հետախուզական ծառայություններն ավելի վաղ՝ օգոստոսի 5-8-ը, լայն շուրջկալներ էին անցկացրել՝ ծերբակալելով սիրիացիների ներկայությունը դատապարտող մի շարք անձանց: Մասնավորապես ծերբակալվել են արդեն լուծարված Լիբանանյան ուժեր կուսակցության 200 մարտիկներ, որոնք տարագիր գեներալ Միշել Աունի համակիրներն են: Որոշ մեկնաբաններ իշխանությունների այս գործողությունները գնահատում են որպես այն գործիչներին ուղղված նախազգուշացում, որոնք դատապարտում են վարչակարգի ռազմականացումը, ժողովրդավարական ազատությունների ոտնահարումը:

Պ. Բ.

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ-ն տնտեսական բարեփոխումների իմաստով եթե ոչ մեկ, ապա կես քայլ առաջ է»

Գնահատում է Կիրգիզիայի Ազգային բանկի նախագահը

«Հայաստանում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ», այսպես է գնահատում Հայաստանի իրավիճակն ընդհանրապես Կիրգիզիայի կենտրոնական բանկի նախագահ Ուլան Սարբանովը՝ 4 տարի անց նորից այստեղ գալով: Երեկ ՀՀ կենտրոնական բանկում Կիրգիզիայի թիվ մեկ բանկիրը անկեղծորեն խոստովանեց, որ Հայաստանը տնտեսական բարեփոխումների առումով եթե ոչ մեկ, ապա գոնե կես քայլ առաջ է անցել: Մասնավորապես, Հայաստանը զգալիորեն առաջ է մասնավորեցման բարձր, տղաճի ցածր մակարդակով: Պրն Սարբանովը կարծում է, որ Հայաստանում, մասնավորապես բանկային համակարգում ու ԿԲ աշխատանքում կան դրական եւ ուսանելի շատ կողմեր: Հենց փորձի փոխանակման նպատակով էլ Հայաստան այցելած պրն Սարբանովը երեկ ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանի հետ ստորագրեց համատեղ հայտարարություն՝ համագործակցության, մասնավորապես տեղեկատվության, փորձի ու կադրերի փոխանակման վերաբերյալ: ՀՀ ԿԲ նախագահի գնահատմամբ՝ երկու երկրներն ունեն շատ ընդհանրական եզրեր սոցիալ-տնտեսական վիճակի, բնակչության քանակի ու կենսամակարդակի, տնտեսական ցուցանիշների իմաստով, երկու երկրներն էլ գնում են տնտեսական բարեփոխումների նույն ճանապարհով եւ շատ կարեւոր է փորձի փոխանակումը: Մասնավորապես Կիրգիզիայի ազգային բանկն ունի բանկային վերահսկողության վերջերս ներդրված կարեւոր մեխանիզմ, որն արդարացված կլինի նաեւ Հայաստանի համար:

Տեղեկացվեց, որ Կիրգիզիայում կա 19 կոմերցիոն բանկ (Հայաստանում այդ թիվը 31 է): Ազգային բանկի նախագահի գնահատմամբ երկիրը կարողացել է դուրս գալ այն տագնապալի իրավիճակից, որը ստեղծվել էր վերջերս մի քանի բանկերում: Արդյունքում 4-5 բանկերի արտանագիրը ճանաչվել է անվավեր, սակայն կարճ ժամանակահատվածում այդքան բանկի փակվելը էական ազդեցություն չի թողել երկրի տնտեսության վրա: Կիրգիզիայում եւս բանկային համակարգն ունի շատ փոքր ազդեցություն երկրի տնտեսության վրա, ինչպես եւ Հայաստանում: Այդ իմաստով գրեթե նույն իրավիճակն է Հայաստանում. 31 բանկերից 3-ն էլ փակվել են Հայաստանում: Այդ երեւույթը Տիգրան Սարգսյանը համարում է «բանկային համակարգի առողջացում եւ կայուն ու երկարաժամկետ զարգացման հիմքերի ապահովում»:

Հիշեցնենք, որ Կիրգիզիան արտաքին պարտքի բեռի մակարդակով Հայաստանի ու նախկին խորհրդային երեք հանրապետությունների հետ (Վրաստան, Մոլդովա, Տաջիկստան) միեւնույն խմբի մեջ է: Այս երկրի արտաքին պարտքը արդեն հասնում է 1 միլիարդ 700 միլ-ի: «Ի՞նչ է պատրաստվում անել Կիրգիզիան արտաքին պարտքի մարումն արագացնելու ուղղությամբ»՝ «Ազգի» հարցին ի պատասխան ազգային բանկի նախագահը նշեց, որ Հայաստանը եւ Կիրգիզիան այն երկրների թվում չեն, որտեղ իրավիճակը ամենաբարդն է, եւ որոնք կարող են ընդգրկվել պարտքի ցածր բեռով աղքատ երկրների (HIPC խմբի) մեջ: «Մենք ունենք տնտեսական լծակներ եւ կարող ենք ինքնուրույն լուծել այդ հարցը», լավատեսորեն եզրափակեց պրն Սարբանովը:

Գ. Մ.

ՄՇԱԿՈՒՅԹ

Ամեն մեկիս հետ պատահում է. գալիս է մի ժամ, երբ ցանկանում ես ազատվել ամեն տեսակ փոշուց, ամեն տեսակ լափից ու ֆափից եւ գնալ, մտնել մի տարածք ու մի ժամանակի մեջ, ուր ամեն ինչ մաքուր է: Այսպես է: Ու այդ ժամանակ կողքիդ լինում է մեկը, որը մաքրում է քեզ քո բոլոր մեղքերից: Այսպես մաքրում է քեզ Մարինե Վարդանյան-Համբարձումյանը, որը հայտնի է Մարինե Ալես անվանումով: Կոմպոզիտո՞ր է, բանաստե՞ղծ, բա՞րդ, ասո՞ւղ... Ինքն իրեն

Թող թափառողը տուն հասնի

Ներկայացվելու է Մարինե Ալեսի նոր սկավառակը

ավելի ճիշտ է բացատրում.

– Երգը, երաժշտությունը, բառը գալիս, մեջս նստում են: Ու դրանք պիտի դուրս գան, պիտի հնչեն: Չգիտեմ՝ վաղը, մյուս օրը դրանք ուրիշները կերգե՞ն, ուրիշները կցանկանա՞ն ցուցադրել: Չգիտեմ: Բայց որեւէ մի պահի դրանք պետք է հնչեն: Ու հնչեցնողը միայն ես կարող եմ լինել, քանզի դրանք իմն են, իմ տառապանքը, իմ ուրախությունը, իմ կարոտն ու իմ ցանկությունը:

...Փոքր է նավակը, բեռը՝ մեծ, ծովը գալիս-գնում է, մեկ փայփայում է, մեկ՝ տանջում եւ իր երգերն է երգում: Թող սիրահարը սեր փնտրի, իսկ փառասերն՝ իր գահը, թող թափառողը տուն հասնի, սեւ թե սպիտակ՝ մի խաղ է...

Աշխարհի փոշոտ ճանապարհներին թափառող հազարավոր, միլիոնավոր մարդկանց մեջ է Մարինեն: Ցածրածայն, առանց ավելորդ ճիգ ու ջանքի, առանց որեւէ մեկին զարմացնելու մորմոքի երգում է իր երգը: Երբ լսում ես այդ երգերը, թվում է, թե քոնն են դրանք,

պտտվում, ու լսվում են խոսքեր, որ շատ են կրկնվել, շատ, անչափ շատ: Մարինե Ալեսն ասված խոսքը նոր ոճով է ասում, նոր ձեւով է ասում: Ու բնավ չի պարտադրում քեզ, ինքդ գնում, հլու կամակատարն ես դառնում մի տիրակալի, որ քեզ օգնում է մաքրվել կեղտից:

Հազար ճանապարհ կարող ես անցնել, ութ տարի կարող ես ապրել Միացյալ Նահանգների պես մի տարածքում, բայց դու գիտես, որ քո տունն այստեղ է՝ Երեւանում, որ քո տունը քո տատից, քո ծնողներից բացվել են: Ու երբ լսում ես Մարինե Ալեսի երգերը (Ալես-ը իր զավակների՝ Ալեքսանդրի եւ Սեդայի անունների հապավված ձեւն է), հասկանում ես, թե ինչու է նա իր լազերային սկավառակում ամփոփված երգերը կոչել «Գնում եմ ինձանից...»: Ինքն իրենից հեռանալով քեզ է գալիս՝ որպես քո թարգմանը, ճշմարիտ վերծանողը քո ամենամաքուր մտքերի ու սրբազան աղոթքների:

Հայ երգի ստեղծողների շարքում Մարինե Ալեսն առանձնանում է իր նուրբ երգերով, որոնք թեթեւ, սենտիմենտալ չեն, այլ ցավի, կարոտի, ուրախության ճիչ, ճիչ, որը Մարինե Ալեսի երաժշտության ու խոսքի հատակում է: Սարսռեցնում է, քանզի ճշմարիտ ասված ու ապրած կյանքի արձանագրություն է:

Երեւանի երաժշտասեր հասարակությանը ներկայացվում է Մարինե Ալեսը: Վստահ եմք, որ սիրելի կդառնա շատերի համար, գոնե նրանց համար, ովքեր չեն մոռացել աղոթելը:

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՌՅԱՆ

Հայ մնալու գաղտնիքը

Հայրենիքում սանալով ռեժիսորի մասնագիտություն, Գեւորգ Ավետիսյանն Ամերիկա մեկնելուց հետո որոշեց օգտակար գործ կատարել Լոս Անջելեսի հայ համայնքի համար: Հաղթահարելով մեծ դժվարություններ, հիմնեց թատրոն՝ իր շուրջը համախմբելով 200-ից ավելի հայ երեխաների, մասամբ նաեւ մեծահասակների:

Վերջերս Գեւորգը մի պատկառելի խմբով եղավ Երեւանում եւ մի քանի բարեգործական ներկայացումներով հանդես եկավ Հակոբ Պարոնյանի անվան թատրոնում:

Տոնականորեն զարդարված դահլիճը լեփ-լեցուն էր:

Հանդիսատեսները ջերմորեն եւ անթիվ ծաղկեփնջերով դիմավորեցին «արտիստ» երեխաներին, որոնք ցուցադրեցին հրաշալի երգ ու պար, հիանալի հումոր, եւ որ ամենակարեւորն է, լուրջ իմացություն մեր անցյալի պատմության:

Ուժեղ էր ներկայացման ռեժիսուրան, կատարված էր երաժշտության ճաշակով ընտրություն: Հիշատակենք նաեւ, որ Գեւորգն այս ազգասիրական գործին նվիրվել է իր ընտանիքով:

Թատրոնի գեղարվեստական ձեւավորումը, զգեստավորումը նրա կնոջ՝ Մարիցա Կարապետյանի խնամքոտ ձեռքի արդյունքն է, որը միաժամանակ իր դստեր հետ պարում է:

Այս ներկայացումները հաջողություններ են ունեցել նաեւ Լոս Անջելեսում, Գլենդեյլում, Հոլիվուդում, սակայն թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեւորգ Ավետիսյանն այն հայրենիք է բերել՝ ապացուցելու, թե մենք որտեղ էլ որ լինենք, մեկ ազգ ենք, մեկ մշակույթ:

Գեւորգ Ավետիսյանն իր «երեխաների» հետ եղել է Ծաղկաձորում, Էջմիածնում, Մատենադարանում, Ծիծեռնակաբերդում՝ ցանկանալով, որ հայրենի բնության գողտրիկ անկյունները գոհացնեն նրանց իղձերի պարակը:

ԱՐԱՌ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ

100-ամյա հոբելյարը՝ Եղիա Մելիքյան

ԱՄՆ-ի եւ Կանադայի ՌԱԿ շրջանային կոմիտեն ջերմորեն շնորհավորել է իր երկարամյա նվիրյալ անդամներից, Պրովիդենսի (Ռոդ Այլենդ) Արմենակ Եկարյանի անվան մասնաճյուղի ատենապետ Եղիա (Էլ) Մելիքյանին՝ ծննդյան 100-րդ տարեդարձի առթիվ, որը նշվել է օգոստոսի 12-ին, եւ մաղթել առողջություն, ուժ եւ կարողություն:

Եղիա Մելիքյանի աշխարհը սեւ ու սպիտակ լուսանկարչությունն է եղել: Հարյուրավոր, թերեւս հազարավոր նկարներ են խնամքով պահվում Մաունթ Պլեզենտում գտնվող իր գողտրիկ տանը: Նա եղել է նահանգի ամենասիրված ու ամենաբեղմնավոր դպրոցական լուսանկարիչներից մեկը, որը 1930-ականներից սկսած նվիրված է եղել իր գործին:

Միացյալ Նահանգներ է գաղթել 1913-ին, եղեռնից մի փոքր առաջ, միանալու հորը, բայց մայրը, եղբայրը եւ մյուս անդամները զոհ են գնացել մեծ ողբերգությանը: Սկզբում աշխատել է Վուստերում տեղադրված հոր նպարեղենի խանութում, ապա տեղափոխվել Պրովիդենս՝ լուսանկարչական աշխատանքի հրավեր ստանալով: Նրա առաջին կինը՝ Արմենուհի Քելչիկյանը, մահացել է 1976-ին, իսկ երկրորդ կինը՝ Սառա Տեր-Վարդանյանը, 1996-ին: Ունի երկու զավակ՝ Հարութը (Մայք), որն ակնաբույժ է, եւ Մարին, որը նկարչուհի է: Երկուսն էլ ապրում են Նյու Յորքում:

Հ. Ծ.

Հայտարարություն

«Աղետի գոտի» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է շինարարական կազմակերպություններին մասնակցելու հետեւյալ բնակելի շենքերի ուժեղացման-վերականգնման աշխատանքների մրցույթին.

ա) Պայմանագիր LAGS 11/01 — ք. Գյումրի, Կոշոյան փ. 5ա

բ) Պայմանագիր LAGS 12/01 — ք. Գյումրի, Շիրակացի փ. 7ա

գ) Պայմանագիր LAGS 13/01 — ք. Գյումրի, Քուքիսյան փ. 8

Մրցութային փաստաթղթերի փաթեթը կարելի է ձեռք բերել սույն թվականի օգոստոսի 23-ից հետեւյալ հասցեով՝

«Հայնախագիծ» ՓԲԸ

ք. Երեւան, Չարենցի փ. 1, հեռ.՝ 576 691, 575 895՝

յուրաքանչյուր մրցութային փաթեթի համար 40.000 դրամ անհատույց վճարելով

«Հայնախագիծ» ՓԲԸ-ի դրամարկղում կամ փոխանցելով ներքոհիշյալ հաշվարկային համարին.

«Արդշինբանկ» հ/հ 121010003857:

Մրցույթի լեզուն՝ հայերեն:

Առաջարկներն ընդունվում եւ ներկայացվում են կնքված ծրարներով՝ մեկ բնօրինակ եւ 2 պատճեն, ներքոհիշյալ հասցեով՝

«Աղետի գոտի» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք թիվ 2, 103 սենյակ, հեռ.՝ 542 473:

Մրցութային առաջարկների հանձնման վերջին ժամկետն է՝ 2001 թ. սեպտեմբերի 12-ը, ժամը 14:00: Նշված ժամկետից ուշ ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

Առաջարկների ծրարները կբացվեն շահագրգիռ մասնակիցների ներկայությամբ, վերոհիշյալ հասցեով՝ 2001 թ. սեպտեմբերի 12-ին, ժ. 14:30-ին:

Մրցույթի հետ կապված բոլոր հարցերով դիմել «Աղետի գոտի» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ հետեւյալ հասցեով՝

ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք թիվ 2, 103 սենյակ, հեռ.՝ 542 473:

ք. Գյումրի, Մյասնիկյան փ. 69ա, հեռ.՝ 23 930, հեռ/ֆաքս՝ 38 239

ք. Վանաձոր, Բաղրամյան փ. 21, հեռ.՝ 43 209:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺԻՆ

1991-2001 նվաճումների տասնամյակ

Անգլերեն յոթ փուլերով. 2001 թ.

Յուրաքանչյուր փուլի տեւողությունը՝

(I, III, V, VII փուլեր)	Սեպտեմբերի 11-ից մինչեւ նոյեմբերի 10-ը, երեքշաբթի, հինգշաբթի օրերին ժամը՝ 17:00-20:00 եւ շաբաթ օրը ժամը՝ 14:00-17:00
(II, IV, VI փուլեր)	Սեպտեմբերի 10-ից մինչեւ նոյեմբերի 9-ը, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը՝ 17:00-20:00
վարձը՝	130 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)

TOEFL-ի, GMAT-ի, GRE-ի նախապատրաստական դասընթացներ

TOEFL, GRE տեւողությունը՝	Սեպտեմբերի 10-ից մինչեւ հոկտեմբերի 10-ը, երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը՝ 17:00-20:00
GMAT տեւողությունը՝	Սեպտեմբերի 11-ից մինչեւ հոկտեմբերի 11-ը, երեքշաբթի, հինգշաբթի օրերին, ժամը՝ 17:00-20:00 եւ շաբաթ օրը, ժամը՝ 14:00-17:00
վարձը՝	60 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (ներառյալ ԱԱՀ)

Վճարման եւ գրանցման վերջնաժամկետն է 2001 թ. սեպտեմբերի 7-ը, ժամը 17:00-ը

- Դասընթացների գրանցման եւ վճարման համար դիմել Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ), 19ա սենյակ, ժամը 9:00-17:45: Ուշացած ուսանողները կընդգրկվեն միայն խմբում ազատ տեղ լինելու դեպքում
- Յուրաքանչյուր դասընթացում կընդգրկվի նվազագույնը 10, առավելագույնը 15 դիմորդ
- Բացի անգլերենի առաջին փուլից, անգլերենի մյուս դասընթացներում ընդգրկվելու համար դիմորդները պետք է հանձնեն **անգլերեն լեզվի քննություն**, որը տեղի է ունենում յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օր (**սեպտեմբերի 3-ին**), ժամը 13:00, ՀԱՀ-ի փոքր դահլիճում: Քննության վճարն է 500 դրամ
- Միաժամանակ կամ հաջորդաբար մի քանի փուլերի գրանցվելու դեպքում գործում են զեղչեր
- *Օգոստոսին ՀԱՀ-ի հատուկ դասընթացների բաժինը չի աշխատում*

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել
ՀԱՀ-ի 19ա սենյակ, ժամը 9:00-17:45, կամ զանգահարել՝ 51-27-06, 51-27-07
E-mail: extension@aua.am; http://www.aua.am/extens.htm

ՀՀ ՆՈՐ ՆԱՄԱԿԱՆԻՇԵՐ

2001 թ. օգոստոսի 25-ին Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությունը փոստային շրջանառության մեջ է դնելու Վայրի բնության պահպանության հիմնադրամի (WWF) շրջանակներում տպագրված, Հայաստանի կենդանական եւ բուսական աշխարհ շարքից, «Պարսկական սկյուռին» նվիրված չորս նամականիշերը:

Օգոստոսի 27-ին շրջանառության մեջ է դրվելու Հայաստանում քիսոնությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված մեկ գեղաթերթիկ (VIII թողարկում):

Նամականիշերը մարվելու են թիվ 9 փոստի բաժանմունքում առաջին օրվա հատուկ մարման դրոշմակով: Տպագրությունը կատարված է Հոլանդիայի Joh.Enschedé տպարանում:

Սփյուռքահայ մարզիկները ծանոթանում են հայրենիքին

Երկրորդ Համահայկական խաղերը միայն մարզական միջոցառումներով չեն սահմանափակվում: Խաղերի կազմկոմիտեն մշակել է մշակութային բավական հագեցած ծրագիր, ինչը հնարավորություն կընձեռի սփյուռքահայ մեր հայրենակիցներին անձամբ ծանոթանալու մայր հայրենիքի տեսարժան վայրերին, մեր ժողովրդի պատմությանն ու մշակույթին: Չէ՞ որ խաղերի մասնակիցներից շատերն առաջին անգամ են լինում Հայաստանում, եւ կազմկոմիտեն ջանում է, որպեսզի մայր հայրենիքում անցկացրած այս ժամանակահատվածն անջնջելի հետք թողնի նրանց հուշերում, ավելի ամրացնվեն հայրենիք-սփյուռք կապերը:

Երեկ Համահայկական խաղերի մրցումներում հանգստյան օր էր եւ խաղերի մասնակիցների համար կազմակերպվել էր միջոցառումների մի շարք: Առավոտյան մարզական պատվիրակություններն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակներ դրեցին Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին, Ցեղասպանության թանգարանում ծանոթացան 1915 թ. հայերի ցեղասպանությանը վերաբերող նյութերին: Կեսօրին խաղերի մասնակիցների համար հետաքրքիր էքսկուրսիա էր կազմակերպվել Երեւանում կառուցվող նորակառույց եկեղեցում, իսկ երեկոյան սփյուռքահայ մարզիկները հաճելի ժամանակ անցկացրեցին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, որտեղ տեղի ունեցավ համերգ: Մասնակիցներից շատերն արդեն հասցրել են լինել Սեւանում ու Էջմիածնում, Գառնի-Գեղարդում եւ այլ տեսարժան վայրերում:

ԱՐԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Թենիսիստներին մեդալները հանձնեց Երեւանի քաղաքապետը



Կարեն Դեմիրճյանի անվան մարզամշակութային կենտրոնում սեղանի թենիսիստներն ավարտեցին թիմային պայքարը: Կանանց մրցաշարի եզրափակիչում չեմպիոնի կոչումը վիճարկեցին Համահայկական առաջին խաղերի հաղթող Երեւանի եւ Վանաձորի թիմերը: Երկու թիմերում էլ բարձրակարգ մարզուհիներ են ընդգրկված, ուստի պատահական չէր նրանց միջեւ ծավալված թեժ պայքարը: Ամեն ինչ որոշվեց Երեւանցի Լուսինե Հովհաննիսյանի եւ Վանաձորցի Լուսինե Նիգոյանի մրցավեճում: Մինչ այդ Երեւանցիները հաղթում էին 2-1 հաշվով: Խաղասկիզբը հաջող էր Վանաձորցի թենիսիստուհու համար, որն առջեւից էր ընթանում 12-0 հաշվով: Ի պատիվ Հովհաննիսյանի, նա իր մեջ ուժ գտավ ոչ միայն հավասարեցնելու հաշիվը, այլեւ մրցախաղն ավարտելու իր օգտին՝ հաղթական միավոր պարգեւելով Երեւանի թիմին: Այսպիսով, Երեւանի թիմը 2-րդ անգամ նվաճեց Համահայկական խաղերի չեմպիոնի կոչումը: Այդ հաջողությունում իրենց ներդրումն ունեցան մարզիչ Ֆելիքս Սարգսյանի սաները՝ Լուսինե Հովհաննիսյանը, Լուիզա Նազարյանն ու Վերժինե Ղարիբյանը, որոնք մեկ անգամ եւս հաստատեցին իրենց բարձր կարգը: Նրանց խաղերի ոսկե մեդալներով պարգեւատրեց Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը, որն, ի դեպ, նաեւ սեղանի թենիսի Ֆեդերացիայի նախագահն է:

Տղամարդկանց մրցաշարում Համահայկական խաղերի չեմպիոնի ոսկե մեդալների համար մրցավեճի բռնվեցին Բուխարեստի եւ Երեւանի թիմերը: Համառ պայքարում անցած մրցախաղն ի վերջո հաջողություն բերեց ռումինահայ թենիսիստներին: Մրցանակային 3-րդ տեղը գրավեցին գյումրեցիները: Այսօր հայտնի կդառնան կանանց եւ տղամարդկանց անհատական խաղերի եւ զուգախաղերի հաղթողները:

Առջեւում ֆուտբոլի քառորդ եզրափակիչն է

Համահայկական խաղերի ֆուտբոլի մրցաշարում հայտնի դարձան այն ութ ուժեղագույն թիմերը, որոնք կշարունակեն պայքարը պարգեւների համար: Առաջին ենթախմբից հաջորդ փուլ դուրս եկավ Բառնաուլի թիմը, որն իր երկրորդ հանդիպումն էլ շահեց Սխալֆալահի ֆուտբոլիստներից (5-1): Երկրորդ ենթախմբում Լոս Անջելեսի թիմը նախապես ապահովել էր իր մասնակցությունը հաջորդ փուլին: 4-րդ ենթախմբի հաղթողի հարցը պետք է որոշվեր Գյումրիի եւ Սոչիանի թիմերի մրցավեճում: Համառ պայքարում ընթացած խաղում այդպես էլ գոլ չգրանցվեց: Եվ քանի որ երկու թիմերն էլ հավասար ցուցանիշներ ունեին, առաջին տեղի հարցը վճռվեց վիճակահանությամբ: Բախտը ժպտաց Սոչիանի ֆուտբոլիստներին: Սակայն գյումրեցիներն էլ մրցակարգի համածայն կշարունակեն պայքարը, քանի որ 2-րդ տեղ գրաված թիմերի մեջ լավագույն արդյունքն ունեն:

3-րդ խմբի առաջատարների՝ Երեւանի եւ Սամբուլի թիմերի խաղն ավարտվեց դաշտի տերերի հաղթանակով (3-1): Երկու թիմերն էլ մնան հաջորդ փուլ:

5-րդ ենթախմբում սեփանակերտցիները թեեւ արդեն ապահովել էին հաջորդ փուլի ուղեգիրը, սակայն Քյոլնի հետ խաղում էլ դրսեւորեցին հաղթանակի հասնելու կամք ու վճռականություն եւ մրցակցին պարտության մատնեցին 3-1 հաշվով: 2-րդ տեղը գրավեց Վալլի թիմը՝ 3-0 հաշվով առավելության հասնելով մարսելցիների նկատմամբ:

Եվ այսպես, այսօր ժամը 18:30-ին կկայանան հետեւյալ հանդիպումները:

Բառնաուլ-Սամբուլ
(Աբովյանում)

Երեւան-Գյումրի
(Արտաշատում)

Սոչիան-Ստեփանակերտ
(Աշտարակում)

Լոս Անջելես-Վալլի
(«Նաիրիում»)

Լողում բոլոր չեմպիոններն էլ Երեւանից են

Մենք արդեն տեղեկացրել էինք, որ Համահայկական խաղերի լողի մրցումներում խաղարկված բոլոր 8 ոսկե մեդալներն էլ երեւանյան գրանցում էին ստացել: Ծրագրի ավարտական մրցաձեւերում էլ երեւանցի լողորդները մրցակիցներին չզիջեցին չեմպիոնի կոչումը: Այսպես, կանանց եւ տղամարդկանց 4x50 մ փոխանցումալողում Երեւանի թիմերը դարձան հաղթող: Կանանց թիմը մրցաշարածությունը հաղթահարեց 2 ռոպե 6 վրկ-ում՝ առաջ անցնելով հաջորդ տեղերում հանգրվանած Հալեպի (2.20,41) եւ Թեհրանի (2.33,56) լողորդուհիներից:

Տղամարդկանց երեւանյան քառյակը փոխանցումալողն ավարտեց 1 ռոպե 43,19 վրկ-ում, ետեւ թողնելով 13 վրկ-ով գերազանցելով մրցանակակիր դարձած Սամբուլի եւ Թեհրանի լողորդներին:

200 մ ազատ լողաոճում լավագույնը երեւանցի Միխայել Քոլոյանն է՝ 1.59,90: Նրա հիմնական մրցակիցներն էին թեհրանցի Վարազ Նովշադեյանը եւ հալեպցի Աբրահամ Դեմիրջյանը, որոնք էլ դարձան 2-րդ եւ 3-րդ մրցանակակիրներ:

ԵՎՐՈԳԱՎԱԹԵՐ

Կիեւի «Դինամո» խմբային մրցաշարի մասնակից

Կայացավ չեմպիոնների լիգայի որակավորման 3-րդ փուլի 6 հանդիպում: Հաղթողներն իրավունք ստացան նախապես ընտրված 16 ուժեղագույն ակումբների հետ միասին հանդես գալու չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Այդ խնդիրը հաջողությամբ լուծեց Ուկրաինայի չեմպիոն Կիեւի «Դինամո»: Դինամոյականների հաջողությունը կասկած չէր հարուցում, քանի որ դեռեւս առաջին խաղում մրցակցի դաշտում կիեւցիները 4-2 հաշվով հաղթել էին ռումինական «Ստյաուային»: Կիեւում կայացած հանդիպումն ավարտվեց ոչ ոքի (1-1):

Ահա մյուս հինգ հանդիպումների արդյունքները (փակագծում նշված են առաջին խաղերի հաշիվները).

«Բայեր» Գերմանիա-«Ցրվենա Զվեզդա» Հարավսլ.՝	3-0 (0-0)
«Լիվերպուլ» Անգլիա-«Հակա» Ֆինլանդիա՝	4-1 (5-0)
«Լացիո» Իտալիա-«Կոպենհագեն» Դանիա՝	4-1 (1-2)
«Բարսելոն» Իսպանիա-«Վիսլա» Լեհաստան՝	1-0 (4-3)
«Մալյորկա» Իսպանիա-«Հայդուկ» Խորվաթիա՝	2-0 (0-1)

Մնացած 10 հանդիպումները տեղի ունեցան երեկ ուշ երեկոյան:

«ԳԵՅԼԻ ՖՈՒՏԲՈԼ»

ՖՈՒՏԲՈԼ

Եզրակը հայտնի է

Ինտերտոտոյի գավաթի եզրափակիչ պատասխան հանդիպումներից հետո հայտնի դարձան այն 3 թիմերը, որոնք իրավունք նվաճեցին հանդես գալու ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում: Դրանք են Անգլիայի «Աստոն Վիլան» եւ ֆրանսիական «Պարի Սեն Ժերմեն» ու «Տրուա» թիմերը: Վերջինս այդ իրավունքը նվաճեց համառ պայքարում՝ հյուրընկալվելիս ոչ ոքի (4-4) խաղալով անգլիական «Նյուքասլի» հետ: Առաջին խաղում հաշիվն այդպես էլ չէր բացվել:

Նույնպես ի հաշիվ մրցակցի դաշտում խփած գոլի ՈՒԵՖԱ-ի գավաթի ուղեգիր նվաճեց «Պարի Սեն Ժերմենը» իտալական «Բրեշիա» ակումբի հետ խաղն ավարտելով 1-1 հաշվով: Մրցակիցների առաջին խաղում էլ դարպասները մնացել էին անառիկ:

Իսկ ահա «Աստոն Վիլան» սեփական հարկի տակ համոզիչ հաղթանակ տոնեց «Բազելի» նկատմամբ՝ 4-1: Թիմերի առաջին խաղում գրանցվել էր ոչ ոքի (1-1):

«ԳԵՅԼԻ ՖՈՒՏԲՈԼ»

Հայտարարություն

«Աղետի գոտի» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է շինարարական կազմակերպություններին մասնակցելու

Պայմանագիր LAGS 10/01 ք. Գյումրի, Կամոյի փ. 38

բնակելի շենքի ուժեղացման-վերականգնման աշխատանքների մրցույթին:

Մրցութային փաստաթղթերի փաթեթը կարելի է ձեռք բերել սույն թվականի օգոստոսի 23-ից հետեւյալ հասցեով՝

«Երեւաննախագիծ» ՊՓԲԸ «Գյումրի» ՈՒՀ

ք. Գյումրի, Սայաթ-Նովայի փ., 2, հեռ.՝ 35 522

յուրաքանչյուր մրցութային փաթեթի համար 40.000 դրամ անհատույց վճարելով «Երեւաննախագիծ» ՊՓԲԸ «Գյումրի» ՈՒՀ-ի դրամարկղում կամ փոխանցելով ներքոհիշյալ հաշվարկային համարին.

«Հայէկոնոմբանկի» Գյումրու մասնաճյուղ, հ/հ 163128120736:

Մրցույթի լեզուն՝ հայերեն:

Առաջարկներն ընդունվում եւ ներկայացվում են կնքված ծրարներով՝ մեկ բնօրինակ եւ 2 պատճեն, ներքոհիշյալ հասցեով՝

«Աղետի գոտի» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք թիվ 2, 103 սենյակ, հեռ.՝ 542 473:

Մրցութային առաջարկների հանձնման վերջին ժամկետն է՝ 2001 թ. սեպտեմբերի 12-ը, ժամը 14:00: Նշված ժամկետից ուշ ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

Առաջարկների ծրարները կբացվեն շահագրգիռ մասնակիցների ներկայությամբ, վերոհիշյալ հասցեով՝ 2001 թ. սեպտեմբերի 12-ին, ժ. 14:30-ին:

Մրցույթի հետ կապված բոլոր հարցերով դիմել «Աղետի գոտի» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ հետեւյալ հասցեներով՝

ք. Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք թիվ 2, 103 սենյակ, հեռ.՝ 542 473:

ք. Գյումրի, Մյասնիկյան փ., 69ա, հեռ.՝ 23 930, հեռ/ֆաքս՝ 38 239

ք. Վանաձոր, Բաղրամյան փ., 21, հեռ.՝ 43 209:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը համակարգչային տեխնիկա եւ հարակից սարքավորումներ ձեռք բերելու նպատակով հայտարարում է մրցույթ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները մինչեւ ս. թ. սեպտեմբերի 14-ի ժամը 17-ը պետք է ներկայացնեն առաջարկվող համակարգչային տեխնիկայի եւ հարակից սարքավորումների վերաբերյալ պահանջվող տեղեկությունների ցանկը, գները, մատակարարման եւ երաշխիքային սպասարկման պայմանները:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի Ավտոմատացման վարչություն:

Հասցեն՝ 375010 Երեւան-10, Վազգեն Սարգսյան-6
Հեռախոսներ՝ հաղ. 56-13-62, ներք. 3-52

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մրցույթն անց է կացվում ՀՀ Կենտրոնական բանկի համակարգչային տեխնիկան համալրելու, առկա համակարգչային տեխնիկայի աշխատանքը ու արագ սպասարկումը ապահովելու, բարձր որակի սարքավորումներ ձեռք բերելու եւ կատարվող ծախսերի խնայողության նպատակով:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Մրցույթին կարող են մասնակցել բոլոր իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները եւ արտասահմանյան ֆիրմաները:

2.2. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն 2 ծրարով, որոնցից մեկում պետք է լինի մրցութային առաջարկությունը, իսկ երկրորդում՝ մրցույթին մասնակցող կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ տվյալները:

2.3. Մրցույթին ներկայացվող առաջարկները պետք է լինեն համառոտ, լիարժեք, ամփոփ եւ պարունակեն հետեւյալ տվյալները՝

ա) համակարգչային տեխնիկայի, սարքավորումների անվանումները եւ տեխնիկական բնութագրերը՝ համաձայն մրցույթին ներկայացվող ձեռքբերման ցուցակների:

բ) միավորի գինը եւ ընդհանուր գումարը՝ նշված ֆանկներով ՀՀ Կենտրոնական բանկում (գինը պետք է ներառի փոխադրման ծախսերը եւ ապահովագրման, հարկերի եւ տուրքերի հետ կապված բոլոր ծախսերը):

գ) արտադրող ֆիրման եւ արտադրման երկիրը:

դ) մատակարարման պայմանները՝
- մատակարարման ժամկետները,
- վճարման կարգը:

ե) սարքավորումների երաշխիքային սպասարկման պայմանները՝
- երաշխիքային պարտավորությունների գործելու ժամկետը,
- երաշխիքային սպասարկումն իրականացնող կազմակերպությունը,
- երաշխիքային սպասարկման ծեւը եւ այն պայմանները, որոնց դեպքում երաշխիքային սպասարկումը չի իրականացվում,
- սպասարկման ժամկետը անսարքության մասին տեղեկացվելուց հետո,
- շահագործման համար անհրաժեշտ ծեռնարկների եւ հրահանգների մատակարարումը:

զ) այլ անհրաժեշտ տվյալներ (ըստ մատակարարի հայեցողության):

2.4. Մրցույթին մասնակցող կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ տվյալները պետք է պարունակեն՝
- կազմակերպության անունը, գրանցման երկիրը, հասցեն, հաշվարկային հաշիվը, հեռախոսի համարը,
- գործունեության բնույթը, մատակարարումը կատարելու տեխնիկական եւ ֆինանսական հնարավորությունները, աշխատակազմի որակավորումը,
- գրավոր կարծիք այն կազմակերպություններից, որոնց համար մասնակիցը կատարել է համանման մատակարարումներ:

2.5. ՀՀ ԿԲ-ն պատասխանատու չէ մրցույթի մասնակիցների այն ծախսերի համար, որոնք պայմանավորված են մրցութային առաջարկի նախապատրաստման եւ ուղարկման համար՝ անկախ մրցույթի արդյունքներից:

2.6. Առաջարկվող գները պետք է ներկայացվեն ԱՄՆ դոլարով արտահայտված:

2.7. Մրցութային առաջարկի երաշխիքը՝

ա) մրցույթի մասնակիցը տրամադրում է գրավ 1500000 դրամ (ոչ ռեզիդենտը կարող է մուծել 3000 ԱՄՆ դոլար),

բ) գրավը մուծվում է կանխիկ ՀՀ ԿԲ դրամարկղ կամ անկանխիկ՝ ՀՀ ԿԲ-ի հետեւյալ հաշիվներից մեկին՝

- Հայաստանում	- ՀՀ ԿԲ N 103001702119 դրամով 4621010034 ԱՄՆ դոլարով
- ԱՄՆ-ում	- CITIBANK N 36017162
- Գերմանիայում	- DEUTSCHE BANK N 9499120

գ) գրավը համարվում է մուծված, եթե մինչեւ ս.թ. սեպտեմբերի 14-ի ժամը 17:00-ը գումարը ստացվել է վերը նշված հաշիվներից որեւէ մեկում կամ ՀՀ ԿԲ դրամարկղում:

դ) առանց գրավադրման առաջարկները չեն ընդունվում,

ե) մրցույթում չհաղթելու դեպքում մասնակցի գրավը վերադարձվում է մրցույթի արդյունքների ամփոփումից հետո՝ հինգ բանկային օրվա ընթացքում,

զ) մրցույթում հաղթող կազմակերպությանը գրավը հետ է վերադարձվում մրցույթի արդյունքում կնքված պայմանագրի ավարտից հետո:

է) գրավի վճարման հանձնարարագրում պետք է նշվի «Մրցույթի գրավ»:

2.8. Մրցութային առաջարկի գրավը չի վերադարձվում եթե՝

ա) մրցույթի մասնակիցը հրաժարվում է իր առաջարկից ս. թ. սեպտեմբերի 14-ից հետո,

բ) մրցույթի հաղթողը չի ստորագրում պայմանագիրը:

3. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

3.1. Համակարգչային տեխնիկայի ցանկ

Հ/Հ	Սարքի անվանումը	Ներկայացվող նվազագույն ցուցանիշները*	Քանակը	Արտադրող ֆիրմա
1.	PC Server**	Pentium III 933MHz, 256K full speed Cache, Integrated 10/100 UTP NIC, 512MB RAM, 4x18GB 15K RPM HDD, CD ROM, FDD, 3.5", Monitor 15", mouse, keyboard, 220-240V, 50Hz, Windows 2000 server 5 CAL	6	DELL, HP, IBM
2.	Անհատական համակարգիչ	Pentium 4 processor, 1.4GHz, 256K full speed Cache, Integrated 10/100 UTP NIC, 128MB SDRAM, 10GB HDD, CD-ROM, FDD, 3.5", Monitor 17", mouse, keyboard, 220-240V, 50Hz, Windows 2000 pro or Windows XP	20	DELL, IBM

3.2. Հարակից սարքավորումների ցանկ

Հ/Հ	Սարքի անվանումը	Քանակը	Արտադրող ֆիրմա
1.	Լազերային տպող սարք HP LaserJet 4050N	2	HP
2.	Անխափան սնուցման սարք 500VA	20	APC
3.	Անխափան սնուցման սարք 1400VA	2	APC
4.	SWITCH "3Com Switch 3300 Superstack 3" (24 port, 3C16980A)	2	3Com
5.	Print Server - Ethernet UTP RJ45, 10/100 Mbit/sec, 1 parallel port, Multi-protocol, for HP LasaerJet 4000	20	
6.	DVD writer Pioneer DVR-A03	2	Pioneer

* Մրցույթին կարող են ներկայացվել նաեւ ավելի բարձր բնութագրեր ունեցող տեխնիկայի վերաբերյալ առաջարկներ:
** Նշել նաեւ երկրորդեսորանի տարբերակի գները, ինչպես նաեւ RAID 5-ի ապահովմամբ եւ առանց ապահովման:

3.3. Ցանցային սարքավորումների ցանկ

Սարքի անվանումը	Քանակը	Արտադրող ֆիրմա	Սարքի անվանումը	Քանակը	Արտադրող ֆիրմա
երթուղիչ VANGUARD 7310, հետեւյալ՝	1	Motorola	VANGUARD OPTIONS բաղադրամասեր		Motorola
Vanguard 7310 - 5 Slot Chassis	1		Vanguard 6430 to 6450 upgrade CSK	1	
Vanguard 7310 Multiservice Application Ware License	1		V.24 DIM Site Daughtercard	3	
Vanguard 7300 Series Processor Card	1		4 Port DB-25 Serial Option Card, V.24 DIMs	2	
Vanguard 7300 Series 8 Port Serial Expansion Card (with Rear Transition Module)	5		Vanguard Voice 2 Port FXS Daughter Card	2	
Power Cord, Europe	1		Սարք Model 2530 DigiLink V dedicated all-rate CSU/DSU	16	PATTON
երթուղիչ VANGUARD 6560 FAMILY, հետեւյալ՝		Motorola	Կարգի սարք UMC1000 (with Chassis, 2 CPU, 2 E1 Transceiver (E1-XCVR), 10 TO channel unit)	2	AFC
Vanguard 6560 Rackmount Unit	1		Սարք Alcatel Speed Touch 59Is (with G.703 user interface)	4	Alcatel
Vanguard 6560 Multiservice Application Ware License	1		350 Series Workgroup Bridge with Dual RP-TNC & 128-bit WEP	2	Cisco
Ethernet LAN Card	2		Antenna Kit w/ 21 dBi Dish Ant., 50ft cable, Light. Arrest	2	Cisco
Serial Data Board with DB26 to DB 25 Adapter Cable	8		Antenna Kit w/ 13.5 dBi Yagi Ant., 50ft cable, Light. Arrest	2	Cisco
FXS Card	1		350 Series PCI Adapter w/RP-TNC,Dipole Antenna,128-bit WEP	2	Cisco
			350 Series PC Card w/Integrated Diversity Antenna,128-bitWEP	2	Cisco
			350 Series AP w/Captured Diversity Antennas & 128-bit WEP	2	Cisco
			350 series AP and Bridge 110-220V Power Injector	4	Cisco

4. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

4.1. Մրցութային առաջարկներով ծրարները բացվում են առանց մասնակցի ներկայության, եւ արդյունքները ամփոփվում են մրցութային հանձնաժողովի կողմից:

4.2. Մրցույթի արդյունքները կամփոփվեն մինչեւ ս.թ. սեպտեմբերի 30-ը, եւ հաղթողները գրավոր կտեղեկացվեն 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան պայմանագիրը կնքելու համար:

5. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Մրցութային առաջարկությունները ընդունվում են մինչեւ 2001 թ. սեպտեմբերի 14-ը ժամը 17:00, հետեւյալ հասցեով՝ 375010 ք. Երեւան, Վ. Սարգսյան 6, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հաշվարկների եւ բանկային տեխնոլոգիաների զարգացման դեպարտամենտ, Ավտոմատացման վարչություն:

Հեռախոսներ
հաղ.՝ 56-13-62 ներքին՝ 3-52 կոդ՝ 3742

5.2. Մրցույթին ներկայացվող ծրարների վրա պետք է նշել «Համակարգչային տեխնիկայի մրցույթ»:

ՀՀ ԿԲ Տեղեկատվական կենտրոն

ANNOUNCEMENT

IESC Armenia announces an open competition for its former clients to expand the border of the assistance provided.

IESC is the largest not-for-profit business development organization in the world, utilizing its twelve thousand strong database of senior-level professionals -- who donate their time and experience -- to improve private and public enterprises in developing countries and emerging markets.

Since 1993, the International Executive Service Corps' (IESC's) private-sector development program in Armenia has provided consulting, mentoring, and training to entrepreneurial business people who are leading the country's transition to a more open and competitive market economy. Over IESC's eight years in Armenia, its technical assistance projects and other business development services have resulted in over $3,000,000 in increased sales, $2,919,550 in capital investments, $821,250 in purchases from US companies, and $363,440 in new financing. IESC's assistance also generated over 3,000 new jobs, saved 1,200, trained 1,166 participants and helped develop over 300 new products and services.

IESC has expanded its expertise in technology, benefiting its worldwide economic development programs. Geekcorps, a non-profit technology-based volunteer organization, will become a unit of IESC and collaborate on economic development efforts in developing countries and emerging democracies.

As part of this combined organization, Geekcorps will serve as an independent division of IESC, a volunteer group of experienced business and professional men and women that was founded by David Rockefeller as a private sector Peace Corps. Over the course of almost 40 years, supported principally by the U.S. Agency for International Development (USAID), IESC has assisted small- and medium-sized enterprises in 120 countries around the world. Geekcorps brings to IESC its expertise in information technology and a volunteer base of young technology specialists, enhancing IESC's mission to stimulate regional economies and create jobs.

Information Technology program
2001-2003

IESC Armenia announces a competition for its Information Technology sector development program, which is designed to provide assistance to the 2 most qualified Armenian companies. The applicants will be prescreened according to the objective criteria. The potential candidate should have strong commitment to exports development, qualified personnel and technical and production capacities to implement VE recommendations. The companies chosen will receive assistance of at least 3 Volunteer Expert (VE) projects along with the customized assistance determined by IESC. These could include US VE project, trade show, or sales and marketing assistance, membership in a relevant international trade association, or other business development services.

Technical Assistance in Armenia: Volunteer experts will work with Armenian companies and business associations typically for four to six weeks. Based on the client needs the VE will help in such areas as:

Project Goals:

- Marketing and Sales
- Strategic and Business Planning
- Management
- Finance
- Organization restructuring
- Business Training

Clients are required to provide translation services, local transportation and some incidental expenses depending on the nature of the project.

Information and Assistance in the U.S. (USVE): To promote trade and investment in Armenia and encourage linkages with U.S. companies, IESC volunteer experts in the United States will help Armenian clients:

- Identify and evaluate U.S. equipment and technology,
- Attend trade shows,
- Organize training sessions and embark on new ventures.

Applications are available at IESC Armenia office at Tamanyan 5 apt. 5. Please fill in the application and bring to IESC Armenia's office by September 7th. Applications will be prescreened and winners announced by September 7th 2001.

@rminco
Global Telecommunications

ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ինֆորմացիայի վերականգնում
- Համակարգչային սարքավորումների վերանորոգում

ՆՈՐ ԳՆԵՐ, ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՏԵՐՆԵՏ քարտի օգտագործում
20% ցածր գներով

- Գիշերայինը՝ ամսական $ 20
- Շուրջօրյան՝ ամսական $ 50
- Էլ. փոստը՝ ամսական $ 10

Հեռ.՝ 52-43-51, 52-63-26
E-mail: support@arminco.com
WEB: http://www.arminco.com

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 22. 08. 2001 Գինը՝ 100 դրամ